2018, ՀՈԿՏԵՄԲԵՐ Բ, ԹԻՎ 20 (520)

Բիւզանդա

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական այցն Իտալիա

Հոկտեմբերի 20-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն Իտալիայի հայոց հովվության հոգեւոր դասի եւ վարչական խորհրդի հրավերով մեկնեց Իտալիայի Հանրապետություն՝ հանդիսապետելու հովվության հոգեւոր կենտրոն Միլանի Ս. Քառասուն մանկանց եկեղեցու կառուցման 60-ամյակին նվիրված արարողությունները:

Նորին Սրբությանն ուղեկցում էին Շիրակի թեմի առաջնորդ Միքայել եպս Աջապահյանը, գավազանակիր Անանիա աբդ. Ծատուրյանը եւ կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանը:

Միլանի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորեցին Արեւմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ եւ Վատիկանում Հայ Եկեղեցու ներկայացուցիչ Խաժակ արք. Պարսամյանը, Արեւմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակի փոխանորդ եւ Միլանի Ս. Քառասուն մանկանց եկեղեցու հոգեւոր հովիվ Թովմա վրդ. Խաչատրյանը, ինչպես նաեւ եկեղեցու վարչական խորհրդի ատենապետ տիար Սարո Խուդավերդը, վարչականներ եւ պաշտոնյաներ:

Նույն օրը Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր շքախմբով եւ Իտալիայի հայոց հովվության հոգեւոր դասի ու վարչականների ուղեկցությամբ հանդիպեց Միլանի Կաթոլիկ եկեղեցու արքեպիսկոպոս Մարիո Դելպինիի հետ:

Միլանի Կաթոլիկ եկեղեցու առաջնորդարանի եպիսկոպոսական մատուռում կատարվեց միասնական աղոթք, ապա հանդիպումը շարունակվեց առաջնորդարանի՝ պատվելի հյուրերի համար նախատեսված գահասրահում:

Հայրապետական այցի առաջին օրն ամփոփվեց Միլանի Հայ տանը, ուր Վեհափառ Հայրապետը հանդիպում ունեցավ Միլանի եկեղեցու հովանու ներքո գործող երիտասարդական կազմակերպության վարչական խորհրդի եւ բազմաթիվ երիտասարդների հետ: Հանդիպումն անցկացվեց հարց ու պատասխանի ձեւաչափով, որի ընթացքում Նորին Սրբությունը լուսաբանումներ տվեց հայորդիներին հուզող հարցերի վերաբերյալ, խոսեց Սփյուռքում հայ ինքնության, ազգային-հոգեւոր արժեքների պահպանման կարեւորության, երիտասարդությունից Եկեղեցու ակնկալիքների եւ եկեղեցական կյանքում երիտասարդների ներգրավվածության մասին:

Շարունակություն՝ էջ 4

Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին

Հոկտեմբերի 20-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբաններ՝ Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը եւ լուսարարապետ Հովնան եպս Հակոբյանը մեկնեցին Լիբանան՝ մասնակցելու Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի քահանայական ձեռնադրության եւ օծման 50-ամյակին նվիրված արարողություններին:

Հոկտեմբերի 21-ին Անթիլիասի մայրավանքի Ս. Գրիգոր Լուսավորիչ տաճարում մատուցված Ս. Պատարագից հետո տեղի ունեցած պաշտոնական ընդունելության ընթացքում Նաթան արքեպիսկոպոսն Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունից շնորհավորեց Արամ Ա Կաթողիկոսին՝ հրապարակելով նրան ուղղված Վեհափառ Հայրապետի շնորհավորական ուղերձը, որում մասնավորապես ասված է.

«Գոհունակությամբ տեղեկացանք, որ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Անթիլիասի մայրավանքի մեջ հանդիսավորապես նշվելու է քահանայական Ձեր ձեռնադրության եւ օծման 50-րդ տարեդարձը:

Այս առիթով աստվածակառույց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հղում ենք Ձերդ եղբայրությանը Մեր ջերմ շնորհավորանքները եւ ամենայն բարյաց մաղթանքները:

Հինգ տասնամյակ առաջ Դուք նվիրվեցիք հոգեւոր սպասավորությանը եւ այսօր Ձեր հոբելյանը դիմավորում եք մեր Եկեղեցու անդաստանում՝ արգասավոր ծառայության վաստակով: Տիրոջ պատգամին հավատարիմ՝ Դուք ջանացել եք արդյունավորել Ավետարանի կենարար խոսքի քարոզությունը եւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության խնամքի ներքո գտնվող հայորդյաց հոգեւոր հոգածությունը՝ վայելելով հոգեւոր դասի ու հավատացյալների սերն ու հարգանքը: Այս տարիների ընթացքում Ձեր վաստակը նաեւ հավելվել է գրական գործունեությամբ՝ մեր Եկեղեցու ազգային-հոգեւոր կյանքին եւ միջեկեղեցական հարաբերություններին նվիրված խոհերի եւ ուսումնասիրությունների հրատարակությամբ:

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի առաքելությանը Դուք կոչվեցիք մեր անկախ պետականության վերականգնման շրջանում, երբ նոր հորիզոններ բացվեցին մեր Եկեղեցու առջեւ՝ զորացնելու աշխարհասփյուռ մեր ժողովրդի միասնությունն ու առավել պայծառ դարձնելու նրա հոգեւոր կյանքը: Ուրախ ենք, որ եկեղեցական մեր անդաստանում անբարենպաստ նախորդ ժամանակներից մնացած ընթացքները հաղթահարելու եւ խնդիրները կարգավորելու ուղղությամբ Ձեզ հետ քայլեր ձեռնարկեցինք: Գոհունակությամբ ենք անդրադառնում, որ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ գումարեցինք Հայ Եկեղեցու եպիսկոպոսաց ժողովներ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, սրբադասեցինք մեր անմեղ նահատակներին, ինչպես նաեւ կյանքի կոչեցինք հայրենական ու միջեկեղեցական կարեւոր մի շարք միջոցառումներ:

Հավատում ենք, որ միասնական գործակցությամբ պիտի շարունակենք լուծման առաջնորդել հոգեւոր-եկեղեցական մեր անդաստանում առկա մարտահրավերները՝ ի փառս Աստծո, ի մխիթարություն համայն մեր ժողովրդի եւ ի զորացումն մեր Սուրբ Եկեղեցու: Ներկա մեր կյանքի հիմնախնդիրների առջեւ հրամայական է, որ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին ուխտապահ մեր հոգեւորականաց նվիրյալ ջանքերով առավել արդյունավորությամբ իրագործի տերունավանդ իր առաքելությունը՝ հանուն աշխարհասփյուռ մեր ժողովրդի ազգային ու հոգեւոր զարթոնքի, մեր հայրենիքի բարօրության ու առաջընթացի, համազգային մեր իղձերի իրականացման ու լուսավոր գալիքի:

Վերստին Մեր շնորհավորանքները բերելով, սիրեցյալ եղբայր, եւ հայցելով Տիրոջ Սուրբ Աջի առաջնորդությունն ու հովանին Ձեզ՝ մաղթում ենք քաջառողջություն եւ արդյունավոր գահակալության երկար տարիներ՝ ի շինություն Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու»:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

17 հոկտեմբերի **ԵՄ արտաքին գործողությունների ծառայության Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի տնօրինության գործադիր ղեկավարին**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Եվրոպական միության արտաքին գործողությունների ծառայության Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի տնօրինության գործադիր ղեկավար, դեսպան Թոմաս Մայր-Հարթինգին՝ ուղեկցությամբ ՀՀ-ում ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան Պյոտր Սվիտալսկու:

Հանդիպմանը խոսվեց Հայաստանի եւ Եվրոպական միության միջեւ առկա հարաբերությունների եւ համագործակցության ընդլայնման հեռանկարների մասին:

Զրույցի ընթացքում մասնավոր անդրադարձ կատարվեց հասարակական կյանքում Հայոց Եկեղեցու դերակատարությանը, կարեւորվեց Եկեղեցու առաքելությունը ժողովրդավարության, մարդու իրավունքների եւ սոցիալական արդարության արժեքների պաշտպանության գործում:

Խոսվեց նաեւ ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված Հայ Եկեղեցու ջանքերի, տարածաշրջանի հոգեւոր առաջնորդների հանդիպումների խաղաղարար առաքելության մասին:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը:

19 հոկտեմբերի **ՀՀ-ում Կորեայի դեսպանին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Կորեայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Ու Յուն - Գընին:

Նորին Սրբությունը, դեսպանին մաղթելով արգասաբեր առաքելություն Հայաստանում, արձանագրեց, որ Հայաստանի եւ Կորեայի միջեւ ձեւավորվող դիվանագիտական եւ քաղաքական հարաբերությունները կնպաստեն երկու ժողովուրդների միջեւ փոխճանաչողությանը: Ամենայն Հայոց Հայրապետն անդրադարձ կատարեց նաեւ երկու ժողովուրդների պատմական ընդհանրություններին:

Իր հերթին դեսպան Ու Յուն - Գընը խոսեց հայ-կորեական կապերի եւ երկու երկրների միջեւ գործակցության զարգացման հեռանկարների մասին՝ հարաբերությունների սերտացման գործում կարեւորելով նաեւ Հայոց Եկեղեցու դերակատարությունը:

Հանդիպմանն Ամենայն Հայոց Կաթողիկոսը դեսպանին ներկայացրեց Հայոց Եկեղեցու ներգրավվածությունը միջեկեղեցական եւ միջկրոնական երկխոսություններում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի ցավակցագիրը Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պատրիարքին

Հոկտեմբերի 18-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցագիր է հղել Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Ա Պատրիարքին՝ Դրիմի Կերչ քաղաքի Ճարտարագիտական քոլեջում տեղի ունեցած պայթյունի եւ հրածգության կապակցությամբ, որին զոհ են դարձել եւ վիրավորվել մի քանի տասնյակ մարդիկ:

Դատապարտելով կատարվածը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու հոգեւոր դասի եւ հավատացելոց անունից վշտակցություն է հայտնել Ռուս Ուղղափառ Եկեղեցու հովվապետին, Ռուսաստանի ժողովրդին եւ հրածգության հետեւանքով զոհվածների ընտանիքներին:

«Թող Ամենողորմ Տերն Իր երկնային օթեւաններում խաղաղության մեջ հանգչեցնի զոհվածների հոգիները եւ պահպանի Ռուսաստանը նմանօրինակ ողբերգություններից՝ Իր Աջի հովանու ներքո խաղաղ եւ անվտանգ պահելով նրա բարեսեր ժողովրդին»,- նշել է Նորին Սրբությունը:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 75-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Հոկտեմբերի 18-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում ներկա գտնվեց ՀՀ ԳԱԱ հիմնադրման 75-ամյակին նվիրված հոբելյանական նիստին:

Տերունական աղոթքից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսը նիստի մասնակիցներին բերեց իր օրհնությունն ու շնորհավորանքները:

Մեծարգո՛ նախագահ Հայաստանի Հանրապետության,

Հարգարժա՛ն նախագահ Գիտությունների ազգային ակադեմիայի,

Հանդիսավոր նիստի հարգելի՛ մասնակիցներ,

Ուրախ ենք ներկա գտնվելու Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի հիմնադրման 75-ամյակի տոնական այս միջոցառմանը: Այս պատվական հոբելյանի առիթով բերում ենք ամենքիդ Մեր օրհնությունն ու շնորհավորանքները եւ մաղթում գիտությունների ազգային այս կաճառին արդյունավետ աշխատանքի նոր տասնամյակներ:

Նշանակալի է Ակադեմիայի դերը Հայաստանում հիմնարար գիտությունների տարբեր ճյուղերի զարգացման գործում: Գիտության այս բարձրագույն հաստատության անդամների՝ մեր ազգի պարծանքը դարձած ականավոր գիտնականների անունները ոսկե տառերով են արձանագրվել մեր պատմության մեջ՝ հեղինակություն հավելելով մեր ժողովրդին ողջ աշխարհում: Այսօր էլ Ակադեմիայի տանիքի ներքո, անկախ ամեն դժվարությունից, հանձառությամբ ու նվիրումով տքնում են մեր երկրում գիտությունը առաջ մղող բազմաթիվ վաստակաշատ եւ երիտասարդ գիտնականներ, ովքեր, հիրավի, մեր երկրի զարգացման կարեւոր գրավականն են:

Գիտությունների ազգային ակադեմիայի 75-ամյակի պանծալի հոբելյանը բարեպատեհ առիթ է խորհրդածելու, թե արդի աշխարհի պահանջներին համահունչ ինչ պետք է անել մեր երկրում՝ գիտությանը զարկ տալու, պետության եւ ազգի բաղձալի առաջընթացն ապահովելու համար:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, ինչպես մեր ժողովրդի քրիստոնեական պատմության եւ մեր վերակերտված անկախ պետականության ողջ ընթացքում, այնպես եւ այսօր սատարել ու աջակցել է հայրենանվեր ու ազգանպաստ նախաձեռնություններին: Մեր Եկեղեցին իր առաքելության ողջ ընթացքում գործել է համոզումով, որ գիտությունը պիտի ծառայի ազգի եւ մարդկության բարօրությանը, հոգեւոր եւ բարոյական արժեքների ամրապնդմանը, մարդկային կյանքի եւ նրա միջավայրի բարելավմանը, Տիրոջ արարչագործության խնամքին ու պահպանմանը: Գիտության հեռացումը աստվածադիր արժեքներից եւ բարոյական նորմերից հղի է մարդկության համար ողբերգական հետեւանքներով, որի ցավալի վկայությունները բազմաթիվ են համաշխարհային պատմության մեջ: Դարեր ի վեր մեր Եկեղեցին իր նպաստն է բերել գիտությանը, նաեւ այդ ճանապարհով ծառայել մեր ժողովրդի կյանքի բարօրությանը: Այս առաքելությանն են ծառայել մեր վանքերին ու եկեղեցիներին կից գործող կրթարանները, վարդապետանոցներն ու համալսարանները: Սիրելինե՛ր, մեր ժողովրդի աշխատասիրությունը, գիտելիքի ու գիտության նկատմամբ սերը, հայրենանվիրումը, հավատարմությունը նախնյաց կերտած արժեքներին այն հիմերն են, որոնց վրա պետք է կառուցենք մեր հաջողության պատմությունը, հայոց կյանքի վաղվա օրը: Այսօր պիտի կարողանանք միահամուռ կերպով պայմաններ ստեղծել բացառիկ ստեղծագործ ունակություններով ու գիտելիքներով օժտված մարդկանց առաջընթացի համար, որով մեր ազգի ու պետության առջեւ կբացվեն բոլորովին նոր հնարավորություններ, ու կբազմապատկվի մեր ուժը, կբազմապատկվեն մեր կարողություններն ու հաջողությունները:

Գիտությունների ազգային ակադեմիայի 75-ամյակի ուրախալի առիթով Մեր շնորհավորանքներն ենք բերում Ակադեմիայի անդամներին ու աշխատակիցներին: Վերստին խոնարհում ենք բերում Ակադեմիայի վաստակաշատ հանգուցյալ նախագահներին, անվանի գիտնականներին, ովքեր իրենց գովարժան գիտական մեծ գործունեությամբ հյուսեցին ու հավելեցին փառքն ու համբավը գիտության այս կաճառի: Մեր գնահատանքն ենք բերում Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ տիար Ռադիկ Մարտիրոսյանին, Ակադեմիայի բոլոր անդամներին ու նվիրյալներին, ովքեր շարունակում են գիտական այս հաստատության լավագույն ավանդույթները եւ արձանագրում բարի արդյունքներ:

Մեր մաղթանքն է, որ Բարձրյալ Տերն Իր իմաստության շնորհներով զարդարի ամենքիդ, Գիտությունների ազգային ակադեմիային պարգեւի նորանոր ձեռքբերումներ՝ շարունակելու իր կարեւոր ծառայությունը մեր հայրենիքի շենացման ու բարօրության գործում՝ ապագա գիտնականներին փոխանցելով փառավոր ավանդները մեր լուսամիտ նախնյաց: Հաջողություն ենք մաղթում գիտության մշակներիդ՝ նոր բարձունքներ նվաճելու ճանապարհին:

Աստծո սերը, օրհնությունն ու խաղաղությունը թող լինեն ձեզ եւ ամենքիս հետ. ամեն:

ՉԱՐԵՆՑՆ ԻՐ ՄԱՀՎԱՆ ԿՌԱՀՈՒՄՆԵՐՈՒՄ

Իրական, երեւակայական եւ փիլիսոփայական մահվան գաղափարներն ամբողջ կյանքում ուղեկցել են Չարենցին: Իր կյանքի որքան ոգեշունչ, նույնքան դրամատիկ, ի վերջո, ողբերգական ճանապարհը նա անցել է մահվան ուղեկից ներկայությամբ:

Մահվան զգացողությունը նախ եղել է իր իսկ կենսական ապրումներից ձեւավորված հոգեբանական վիճակ, այնուհետեւ՝ խորհրդապաշտության փիլիսոփայությունից եկող ազդակ, հնդկական վեդաների ուսմունքից փոխանցված աշխարհայեցություն, անհաջող մահափորձ ինքն իր դեմ եւ քաղաքական դատապարտվածության մահվան ճանապարհ...

Սկզբում մահը կամ վեհացնում էր՝ որպես հավերժությանը խառնվելու խորհուրդ, կամ սխրագործում՝ որպես կամավոր զոհ ու զոհաբերում, վերջում մահը դառնում է պարտադրված ճակատագիր: Այսպես Չարենցը մեկ ականջ դրեց մահվան կանչերին, որ հուշկապարիկների գրավիչ ու կործանարար երգի պես էր, մեկ փորձեց հեռանալ այդ կանչերից, բայց հիմա էլ իրեն կանչեցին, հարցաքննեցին ու տվեցին մահու բերան:

Մահը հայտնվում էր մեկ նախորդ կյանքից բերած հիշողությունների անդրադարձով, մեկ նախորդ կյանք դարձող իր ճակատագրով: Մի դեպքում ինքն իր առջեւ կանգնած միայնակ անհատն էր, մյուս դեպքում՝ հանրության ու պետության առաջ կանգնած հանրային հեղինակությունը: Կրկնվում էր հանճարի եւ ամբոխի, այս դեպքում պետության քաղաքականությունն իրականացնող եւ հանրային ամբոխի վերածված պաշտոնյաների բախումը: Նախ հանճարը կործանվեց, հետո՝ ամբոխը: Հանճարը հետո հարություն առավ, ամբոխը դատապարտվեց:

* * *

«Երեք երգ տխրադալուկ աղջկան» (1914) ժողովածուն Չարենցը տպագրեց, երբ 17 տարեկան էր, բանաստեղծությունները գրել է 16 տարեկանում, եւ այն տպավորությունն է, թե հոգեբանական հսկայական ծանրություն կրող այդ տողերի հեղինակը ոչ թե տասնվեցամյա պատանյակ է, այլ արդեն մեկ կյանք ապրած եւ մահվան երեսը տեսած իմաստուն: Չարենցն իր մեջ կուտակել էր նախորդ կյանքից նոր կյանք բերած այլաշխարհայինի մեծ փորձ:

Ահա այդ **«Երեք երգ...»-ի** հիմնական խորհրդանշանները:

«Ճամփին...» - ճանապարհ, անձրեւ, վհատություն, թոքախտավոր կնոջ դառը հազ ու հեծկլտոց, համատարած մութ, ագռավներ, քամու ողբ, օրերի անգոյն երգ:



«Անքուն գիշերին» - անքնություն, մթություն, անցյալի հիշողություն, տխրադալուկ աղջկա գունատ տեսիլ, հիշողության մեջ հեռացած՝ նախկինում սիրած աղջիկ, աղջկա վերաբերմունքից խորացած վրդովմունք եւ կորստի արձագանք՝ «Ես քեզ կորցրի նոր կյանքի շեմին», «Սերը մեզ համար մահվան գին ունի»: Սիրո մի խորհրդավոր պատմություն, երբ սիրած աղջիկը դառնում է «զզվելի կին» եւ բախտորոշ հանգույցը.

Ու... այս եմ հիշում՝
Մի հին անկողին - թաղված մշուշում:
Ու մի մերկ մարմին:
Ու ցավոտ, ճնշված հեկեկանքը իմ...
Ու դուրս եկա ես:
Զգացի միայն, որ ցուրտ է, քամի,-
Որ կյանքն ինձ համար էլ կատակ է մի...
Ինձ համար մեռավ ամեն սրբություն:
Գնա՛, սիրելիս:
Թող կյանքը գլխիս մրրիկներ տեղա
Ու մոխիր ցանի -
Էլ ոչ մի զղջում իմ երազը հին
Հետ չի դարձնի...
(I, 15-16)

Կնոջ դավաճանությունն է, որ անքնության է մատնում, որին հաջորդում է **«Մեռելոց»-ը** - դատարկ, անաղմուկ փողոցներ, անձրեւ, քամի, երեկո - գիշեր, «ամոթին ու ստին» հանձնված հոգու պահ, որ կյանքի գին ունի, աղջկա արդեն իսկ «մոռացված դամբարան». «Մեկն ասաց, որ ստում եմ, ստում,- // Ու լսվում էր հեռվում մեկի լացն անօգուտ»:-

Մեռելոցը մեռելների հիշատակի օրն է՝ գերեզմաններին այցելությամբ: Հիմա այստեղ Չարենցի այցելությունն է հիշատակին, որ ենթադրաբար աղջկա մահն է գուժում: Իրապե՞ս մեռավ աղջիկը, թե՞ մեռավ սոսկ իր համար...

Հոգեբանական այս թնջուկը պարզվում է «Չարենց-Նամե» (1922) պոեմում: Ահա մտաբերումը.

Ես ուզում էի – շո՛ղ,
Իրա՛ն...
Շիրազի վարդեր կարմիր:-

Բայց գտա...
Անկողնի...
Վրա...
Տարածված... մի պաղ... մարմին...

Ներիր, Աստղիկ Ղոնդախչյան,
Իմ լուսե բարեկամ...
Ների՛ր...
(II, 158)

Ներումնահայց դիմումները Չարենցը դեռեւս շարունակում է եւ միջարկում. «Ես... // Հետո... // Աշխարհներ անցա - // Բայց թողածս ետ չբերի...»:

Աստղիկ Ղոնդաղչյանը Չարենցի առաջին սերն էր, ում էլ նվիրված է «Երեք երգ տխրադալուկ աղջկան» ժողովածուն՝ «Աստղիկ Ղոնդաղչյանին»՝ Ալբերտ Սամենից բնաբանով. «Եվ սա վաղնջական իրիկնամուտի վերջին սերն էր»:

Մահվան միստիկան առկա է վաղ շրջանի բանաստեղծական շարքերում՝ «Հրո երկիր» (1913-1916), «Տեսիլաժամեր» (1915), «Լիրիկական բալլադներ» (1915-1917), ինչպես նաեւ «Ծիածանը» (1917) ժողովածուի մեջ եւ այս տարիների այլ գործերում:

Միստիկան՝ խորհրդավոր, անգամ անիմանալի ու անբացատրելի մի ուժ, համակել էր Չարենցին՝ հնարավորություն ընձեռելով մտովի անմիջականորեն հաղորդակցվելու անդրշիրիմյան աշխարհի հետ:

Հրո երկիրը, որ երազային տեսիլի մեջ էր, նրան ներկայանում է որպես «Մահի՛, ոճիրի՛ // Արնաբո՛ւյր գիշեր»: Աղջկա ներկայությունն է՝ «Արնոտ, խելագար»: Եվ ինքն իրեն ուղղած հայացքը.

Քո՛ւյր, գուցե՞ չըկանք...
Գուցե մեկը,- ո՞վ -
Երազել է մեզ
Անլույս գիշերով...
(I, 30)

Սա կարծես նախորդ կյանքի հիշողություն լինի: Իրական կյանքն այնքան անորոշ է ու կորած, որ կարծես անիրական լինի՝ արդեն ապրած ժամանակ:

Աղջկա կերպարը վերածվում է «լուսե մի մեռել»-ի, դառնում «անմարմին տեսիլ»: Հենց սա է մահվան աշխարհի հետ հաղորդակցության մղող միստիկան, որ ցայտում է այսպիսի պատկերներ. «Անցար - լուսավո՛ր, հեռավո՛ր, թեթե՛ւ, // Ճառագայթի պես իրիկնամուտի», «Ու ցուրտ պուրակում, մենակ, հոգեւար // Մեռնում էր հոգիս, ու լուռ էի ես...»:

Շարունակությունը՝ էջ 7

Արշակ Ֆեթվաճյան

Արշակ Ֆեթվաճյանն զգալի ներդրում է ունեցել համաշխարհային նկարչության մեջ: Նա հռչակ է ձեռք բերել գեղանկարչության եւ դիզայնի ասպարեզներում: Արվեստագետն առավելապես հայտնի է իր ջրանկարներով, մեզանում՝ հատկապես հայկական միջնադարյան Անի քաղաքի ճարտարապետական հուշարձանների պատկերումով: Ֆեթվաճյանը նաեւ մշակել է Հայաստանի առաջին Հանրապետության թղթադրամների եւ փոստային դրոշմանիշերի դիզայնը:

Նկարիչը ծնվել է 1866 թ. Տրապիզոնում: Հայրենի քաղաքում ապագա արվեստագետն ուսանել է Ազգային նկարչական ինստիտուտում, իսկ այնուհետեւ կրթությունը շարունակել Պետական նկարչական դպրոցում, որը բացվել էր Կոստանդնուպոլսում՝ քանդակագործ Երվանդ Ոսկանի կողմից: Այստեղ Արշակը ջրանկարչություն է սովորել իտալացի նկարիչ Վալերիից: Նշված կրթարանն ավարտելուց հետո Ֆեթվաճյանը մեկնում է արտասահման ու ուսումնառությունը շարունակում Հռոմի Սան Լուկա ակադեմիայում: Նրա ուսուցիչն իտալացի գեղանկարիչ եւ քանդակագործ Չեզարե Մաքաբին էր:

Երերուք. Հովհաննես Մկրտչի տաճարը

1891 թ. Արշակ Ֆեթվաճյանը մասնակցում է իտալական ազգային նկարչական ցուցահանդեսին եւ այստեղ մեծ ուշադրության է արժանանում: Նույն տարում Ֆեթվաճյանը մեկնում է Վենա՝ կրկին ուսումնառությունը շարունակելու նպատակով: Հայազգի արվեստագետը մի քանի անգամ այցելում է Վենետիկ: Ավելի որոշակի՝ Սուրբ Ղազար կղզի, որտեղ ծանոթանում է Ալիշանի հետ եւ վրձնում նրա դիմանկարը: 1895 թ. տեղափոխվում է Սանկտ Պետերբուրգ: Ռուսաստանում Արշակը մասնակցում է նկարչական ցուցահանդեսների եւ դառնում Ռուս նկարիչների միության անդամ: Այնուհետեւ զբաղվում է թատերաքննադատությամբ: Սանկտ Պետերբուրգում արվեստագետը նաեւ ուսանում է ճարտարապետություն: 1900-ականների սկզբներին մեկնում է Անդրկովկաս: Նա մի քանի ցուցահանդես է կազմակերպում Բաթումիում, Թիֆլիսում ու Բաքվում: Նկարիչը նաեւ մասնակցում է Անիի պեղումներին, որը կազմակերպել էր Նիկողայոս Մառը: Ֆեթվաճյանն ուսումնասիրում է Անի քաղաքը եւ իր շուրջ հազար ջրանկարներում եւ գծանկարներում պատկերում Անիի ժամատները, պալատները, եկեղեցիներն ու վանքերը: Արվեստագետն ամենայն մանրամասներով է պատկերել Անիի հուշարձանների դրվագներն ու դեկորները: Ցավոք, նկարչի՝ Անիին նվիրված գործերի զգալի մասն անհետացել է կամ զգալիորեն վնասվել:

Ֆեթվաճյանը մեկնում է Փարիզ՝ փոստային դրոշմանիշերի տպագրությունը վերահսկելու նպատակով, բայց այնուհետեւ Խորհրդային Հայաստան չի վերադառնում: Ֆրանսիայում նրա գործերը ցուցադրվում են հայտնի ցուցասրահներում, Լուվրում (1919, 1920 թթ.), ինչպես նաեւ՝ Ալբերտի եւ Վիկտորիայի թանգարանում: 1922 թ. Արշակը տեղափոխվում է ԱՄՆ: Նա ապրում է Նյու Յորքում եւ Բոստոնում: Ամերիկայում նկարիչը շարունակում է



Գործ՝ Արամ Վրույրի

ստեղծագործել: ԱՄՆ-ում նա զգալի ճանաչում է ստանում եւ անդամակցում Հարվարդի, Կոլումբիայի ու Չիկագոյի համալսարանների նկարչական խմբակներին:

Ֆեթվաճյանը մի քանի անգամ դիմել է խորհրդային իշխանությանը՝ մուտքի թույլտվություն ստանալու համար, սակայն ամեն անգամ մերժում է ստացել: Մեծանուն նկարիչն իր մահկանացուն կնքում է օտարության մեջ՝ Մասաչուսեթս նահանգի Մեդֆորդ բնակավայրում՝ 1947 թ.: Որոշ ժամանակ անց արվեստագետի մասունքները վերահուղարկավորվում են Երեւանում:

Տիգրան ՄԱԼՈՒՄՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ

Սկիզբը՝ էջ 1

Հայրապետական Սուրբ Պատարագ Միլանի Սուրբ Քառասուն մանկանց եկեղեցում

Հոկտեմբերի 21-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ Միլանի Ս. Քառասուն մանկանց եկեղեցում մատուցվեց Պատարագ: Հայրապետական սուրբ Պատարագին ներկա էին հայ համայնքի անդամներ, Միլանում եւ Իտալիայում գործող հայկական ազգային հաստատությունների ղեկավարներ եւ ներկայացուցիչներ, Իտալիայի Հանրապետությունում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան տիկ. Վիկտորիա Բաղդասարյանը, Միլանում ՀՀ պատվո հյուպատոս տիար Պիետրո Քուչուկյանը, ինչպես նաեւ Միլանի էկումենիկ խորհրդի անդամները:

Սրբազան արարողության ընթացքում Նորին Սրբությունն Իտալիայի հայությանը փոխանցեց հայրապետական իր օրհնությունը, շնորհավորանքներն ու բարեմաղթանքները՝ ուրախություն հայտնելով հիշարժան այս առիթով վերստին հանդիպելու եւ միասնական հոգեպարար աղոթքի հնարավորության համար:

«Քրիստոնեական մեր կյանքում, սիրելիներ, մեծ խանդավառություն է եկեղեցու կառուցման հիշատակումը, քանզի եկեղեցու սուրբ ավազանից ծնվածներիս համար չկա նվիրական այլ վայր, քան եկեղեցին: Տիրոջ սուրբ տաճարում երկնառաք բարիքներով լիանում են հավատացյալների հոգիները, լցվում մխիթարությամբ, առատանում Սուրբ Հոգու շնորհներով: Եկեղեցու կամարների ներքո մեր հոգիներում սերմանվում են հույսն ու սերը, զորանում հավատքը եւ լույս տալիս մեր մտքի եւ հոգու տեսողությանը, որպեսզի եկեղեցիացած՝ մեր քայլերը հաստատուն պահենք Տիրոջ շավիղներում եւ արժանի դառնանք Քրիստոսի պարգեւած փրկության շնորհին՝ երկնային արքայության երանությանը:

Այս մեծագույն իղձով, որը նպատակն է քրիստոնեական կյանքի, մեր ժողովրդի զավակները, որտեղ էլ բնակվեցին, կառուցեցին իրենց եկեղեցիները, որ ապրեն աստվածային սրբության ու օրհնության մեջ եւ անխախտ հավատարմությամբ՝ առաքելահաստատ մեր Եկեղեցուն ու աստվածակառույց Սուրբ Էջմիածնին: Հավատքի եւ եկեղեցասիրության այս վկայությունը վառ կերպով բերում եք նաեւ դուք, սիրելիներ, Իտալիայում ապրող հայորդիներդ: Ձեր բարեպաշտությունը, հավատարմությունը քրիստոնեական մեր ինքնությանն ու արժեքներին հիմքն են այս օրհնյալ երկրում ձեր հանդեպ հարգանքի ու վստահության եւ ձեր հաջողությունների, որովհետեւ Աստված բարիք է պարգեւում խոնարհ սրտով եւ մաքուր հոգով Իր շնորհները ընդունողներին:

Իտալիայում ապրող հայերիդ միջոցով ամրանում են քրիստոնյա մեր երկու ժողովուրդների եղբայրական կապերը եւ այսօր նաեւ բազմակողմանի դարձող համագործակցությունը Իտալիայի եւ Հայաստանի միջեւ»,- նշեց Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր պատգամում:

Վեհափառ Հայրապետը նաեւ խոսեց յուրաքանչյուր հայորդու կողմից հայրենիքի հանդեպ պարտքի մասին: *«Մեր ժողովուրդն այսօր Հայաստանում վերափոխումների նոր հույսերով է լցված եւ հավատում է հայրենի երկրի զարգացման նոր ընթացքներին ու բարի ապագային, որը պիտի կերտենք առ մեր Տերն ապավինությամբ, միասնաբար ու միմյանց աջակցելով: Մեր նվիրումով ու ընդհանուր ջանքերով մեր հայրենիքը պիտի դարձնենք ազգային կյանքի եւ ազգային իղձերի ամուր պատվար: Հայրենիքը մեր ժողովրդի կենսագրությունն է, պատմությունը, մեր սրբություններն ու արժեքներն են, քրիստոնեական նկարագիրը: Այս ճանաչողությունն ու հավատքի ոգին պիտի փոխանցենք մեր զավակներին: Նրանց համար նույնպես հասկանալի պիտի լինի, թե ինչո՞ւ իրենց նախնիները մեծ փորձությունների մեջ անգամ, աշխարհեաշխարհ սփռվելով նույնիսկ, չեն դադարել դպրոց ու եկեղեցի կառուցել, չեն ուրացել հավատքն ու հայրենին:*

Քրիստոսով ենք ճանաչում թե ինչ են սերը, հավատարմությունը, նվիրվածությունը, զոհողությունը, թե ինչ են իրական ազատությունն ու արդարությունը, որ դիմադարձում են չարիքներին: Մեր զավակներին պիտի կոթենք առ Քրիստոս սիրով, որպեսզի կարող լինեն դիմադարձել մեր ժամանակների փորձություններին, մոլար գայթակղություններին եւ բարի հավատքով կարողանան ստեղծել իրենց կյանքի երջանկությունը, որպեսզի ապրեն ու գործեն եկեղեցասիրությամբ, ազգային կյանքի, Հայաստան ու Արցախ հայրենի մեր երկրի հանդեպ պատասխանատվությամբ»,- ընդգծեց Գարեգին Բ Կաթողիկոսը:

Վեհափառ Հայրապետն աղոթքով հիշեց Սրբոց Քառասնից մանկանց եկեղեցու հիմնադիրներ Հովհաննես եւ Սարգիս Դիարբեքիրյաններին: Տոնի առիթով Նորին Սրբությունը շնորհավորեց եւ իր գնահատանքը բերեց համայնքի բարերար հայորդիներին, նվիրյալ վարչականներին, տասնամյակների ընթացքում պաշտոնավարած Արեւմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակներին եւ եկեղեցու հոգեւոր բարեջան հովիվներին՝ հաստատելով, որ նրանց բարի հավատքով ու գործերով, միասնական հանձնառությամբ է շեն ու պայծառ Սրբոց Քառասնից մանկանց եկեղեցին եւ արդյունավոր՝ համայնքի հոգեւոր-եկեղեցական կյանքը:

Հայոց Հայրապետը նաեւ իր գնահատանքն ու օրհնությունը բերեց համայնքի բոլոր անդամներին՝ հորդորելով, որ իրենց զավակներին ուսուցանեն լինել աշակերտներ Սուրբ Ավետարանի, աշակերտներ մեր Տիրոջ առաքյալների ու մեր սուրբ հայրերի, որոնք վկայեցին հավատարմությունը Քրիստոսին եւ իրենց կյանքը նվիրեցին վասն հավատո եւ վասն հայրենյաց:

Պատգամի ավարտին Նորին Սրբությունը հայցեց, որ Տերն ամենուր հայ ժողովրդին պահպանի արի հավատքով, շեն պահի հայոց եկեղեցիները ու պայծառ՝ քրիստոնեական ոգին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն աղոթք բարձրացրեց առ երկնավոր Հայրը, որ Իր օրհնության ներքո մեր ժողովրդին պահի անփորձ ու անվտանգ, մեկ ու միասնական՝ իր Սուրբ Եկեղեցով, իր Սուրբ Էջմիածնով եւ նվիրական իր հայրենիքով: ➥ 5

Սահմանամերձ եկեղեցիներն ու վանքերը

19-րդ դարի երկրորդ կեսում օսմանյան Թուրքիայի բռնապետական լծի դեմ Արեւմտյան Հայաստանում սկսվեց ազգային-ազատագրական ակտիվ պայքար, որն ընդունեց զինյալ դիմակայության բնույթ:

Արեւմտյան Հայաստանի բարձրաբերձ լեռներն ու խորունկ ձորերն ու կիրճերը դարձան հայ ֆիդայիների՝ մահապարտ այրերի գործունեության հիմնական ասպարեզ:

Ֆիդային դատապարտված էր իր կյանքը զոհաբերելու ժողովրդի ազատության եւ նրա ապրելու իրավունքը պաշտպանելու համար: Դաժան, անձնազոհ ու անհավասար էր հայ ֆիդայական գոյամարտը: Մի բուռ քաջեր՝ հայրենակորով ու հերոսակորով պայքարի դրոշ էին պարզել հզոր ու արյունարբու մի կայսրության դեմ:

Այդ պայքարում հայ ֆիդայիները, որպես նեցուկ եւ ապաստարան, օգտագործում էին բնական ամեն մի դիրք, նաեւ ձեռակերտ ամրություններն ու շինվածքները: Սակայն, բացի ֆիզիկական պաշտպանությունից, հայոց եկեղեցիները, վանքերն ու մատուռները հայ ազատամարտիկների համար ունեին հոգեւոր եւ բարոյական պաշտպանվածության մեծ խորհուրդ: Հայոց եկեղեցական հաստատությունների ազգապահպան դերի եւ նշանակության վերաբերյալ հստակ պատկերացումներ ուներ նաեւ մեր հակառակորդը՝ թուրք-օսմանյան իշխանությունը: Այսպես՝ 19-րդ դարի երկրորդ կեսում իշխանավարած Պահրի փաշան՝ Վանի հերթական նահանգապետը, խիստ վտանգավոր է արտահայտվել հայոց վերոնշյալ հաստատությունների հասցեին: Հայատյաց այս ճիվաղը, մտնելով Վանի դաշտ եւ տեսնելով շրջապատի լեռների կանաչի մեջ թաղված անհամար շեներն ու «...անոնց քովն ի վեր, սաղարթներու ընդմէջէն դէպի վեր սլացող գմբէթները», հարցնում է յուրայիններին, թե ինչ են դրանք:

Եվ երբ ի պատասխան հնչում է, որ հայոց վանքերն են, թուրք կուսակալը կատաղած գոչում է. «Ատոնք շատոնց հիմնայատակ պէտք էր եղած ըլլային, որովհետեւ, քանզի անոնք կը մնան, հայութիւնն ալ պիտի մնայ հարկաւ» *(Յուշեր Արմենակ Եկարեանի, Գահիրէ, 1945 թ., էջ 49)*:

Իր ատելության մեջ չափն անցած թուրք բարձր պաշտոնյան՝ մի մեծ նահանգի (վիլայեթի) կառավարիչ փաշան, թերեւս ճիշտ էր իր եզրահանգման մեջ: Այո՛, քանի կանգուն էին հայոց հոգեւոր հաստատությունները, հայությունը կշարունակեր պահպանել իր հոգեւոր եւ ազգային ինքնությունը եւ անընդմեջ դիմակայությունը՝ հանուն ազատության եւ անկախության:

19-րդ դարի 80-ական թթ. վերջերին եւ 90-ականներին ծայր առավ զինատար շարժումը՝ դրսից դեպի էրգիր զենքի ու զինամթերքի ներկրման ծանր ու դժնդակ գործընթացը: Երկրի ներսում զենքը դժվար էր հայթայթել, ուստի մնում էր դրսից՝ արտասահմանից ներկրումը: Այդ օրերին, ականատեսի վկայությամբ, հարկավոր էր ապագա ձեռնարկների համար զենք ունենալ եւ բոլորի «մտածածը, բոլորին զգացածը մէկ էր. զինուիլ... Զինուիլ, բայց ինչպէ՞ս, ուրկէ՞ ճարել զենքը: Եւ բնազդաբար ամենուն աչքը կուղղուէր դէպի արտասահման - դէպի Պարսկաստան ու Կովկասը մանաւանդ» *(Արմ. Եկարեան, էջ 10)*: Դեպի էրգիր զենքի ներկրման աշխատանքներին ակտիվ մասնակցեցին արմենականները, դաշնակցականներն ու հնչակյանները: Առանց զենքի առկայության, առանց զինավարժությունների՝ անկարելի էին դառնում հայ ազգային կուսակցությունների գործունեությունը Էրգրի տարածքում եւ ազգապաշտպան ծրագրերի իրականացումը: Այդ էր պատճառը, որ ազգային կուսակցությունները, որոնք ասպարեզ էին ելել Հայկական հարցը լուծելու համար, հետեւողականորեն հետամուտ եղան զենքի փոխադրության գործը կազմակերպելուն: Սկզբում զենքը փոխադրում էին Ռուսաստանից, որը, սակայն, թանկ էր նստում իր փոխադրական ծախսերով: Հետզհետե Սալմաստում եւ Թավրիզում բացվեցին զինագործական արհեստանոցներ՝ «շինելու համար զէնքերու փայտէ կոթերը եւ երկաթային այն մասերը, որ հնարաւոր է» *(Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, էջ 24)*: Դեպի Արեւմտյան Հայաստանի խորքերը զենքի փոխադրության գործը, ճանապարհների ծայրաստիճան վտանգավոր, անապահով ու դժվարանցանելի լինելու պատճառով, մեծ բարդությունների հետ էր կապված: Դրսից զենքի փոխադրության առաջին խոշոր կենտրոնը Վանն էր, որտեղ կենտրոնացած զենքի եւ զինամթերքի պաշարները հետագայում ուղարկում էին երկրի տարբեր անկյուններ: Բայց մինչեւ Վան հասնելը հազար ու մի փորձություններ էին սպասվում:

Պարսկաստանից զենքի փոխադրումը Սալմաստ-Վան ճանապարհով շուրջ 160 կմ է, իսկ Խոյ-Թադեւոս Առաքյալի վանք - Վան՝ 200 կմ: Առավել կարճը՝ Դերիկ-Վան ուղեգիծը, կազմում է 100 կմ: Սույն ուղեգծով զենքի ակտիվ փոխադրություն էին կազմակերպում դաշնակցականներն ու արմենականները: Նրանք թիկունք էին ընտրել Սալմաստն ու Խոյը՝ որպես կենտրոնավայր ունենալով Դերիկի հինավուրց վանքը: ➥ 5

Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական այցն Իտալիա

4 ↩ Միլանի եկեղեցու կառուցման 60-ամյակի առիթով Հայրապետը տաճարին ընծայեց Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների սրբապատկեր:

Հավարտ սուրբ Պատարագի՝ տեղի ունեցավ Աջհամբույրի արարողություն, որի ընթացքում Պատարագին մասնակից բոլոր հավատացյալները հնարավորություն ունեցան ստանալու Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունը:

Նույն օրը՝ երեկոյան, ի պատիվ Վեհափառ Հայրապետի եւ նրա շքախմբի, Միլանի Հայ տանը տեղի ունեցավ ընդունելություն, որին հրավիրված էր մասնակցելու ողջ համայնքը: Ընթերցվեց Իտալիա այցի կապակցությամբ Նորին Սրբությանն ուղղված՝ Միլանի նահանգի Լոմբարդիայի շրջանային խորհրդի նախագահի ողջույնի խոսքը: Ընդունելության ընթացքում ներկաներին վերստին իր օրհնությունն ու պատգամը բերեց Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Հռոմ

Հայրապետական այցով Իտալիայում գտնվող Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հոկտեմբերի 23-ին շքախմբի ուղեկցությամբ Միլանից մեկնեց Հռոմ:

Այցի շրջանակներում Հռոմի հայկական Սուրբ Վլաս եկեղեցում Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպեց Հռոմի հայ համայնքի ներկայացուցիչներին:

Հրաշափառի հանդիսավոր արարողությունից հետո Նորին Սրբությանը բարիգալստյան խոսք հղեց Արեւմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ եւ Վատիկանում Հայ Եկեղեցու ներկայացուցիչ Խաժակ արք. Պարսամյանը:

Այնուհետեւ ներկաներին իր հայրապետական պատգամը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Վեհափառ Հայրապետը նշեց, որ մեր ժողովուրդը դարեր շարունակ դժվարությունների ու փորձությունների դիմագրավեց, ցեղասպանություն վերապրելով՝ ցրվեց աշխարհով մեկ, բայց ամենուր արթուն եղավ հավատքի մեջ, դիմացավ նեղություններին եւ հավատքի գործերով զարդարեց իր ընթացքը, վերակերտեց ու կազմակերպեց իր ազգային-եկեղեցական կյանքը:

Նորին Սրբությունն իր ուրախությունն արտահայտեց օրեր առաջ Միլանի Սրբոց Քառասնից մանկանց եկեղեցու հաստատման 60-ամյա նշանակալի հոբելյանի հանդիսությանը մասնակցելու առիթով՝ բարձր գնահատելով իտալահայերի նախանձախնդրությունը հոգեւորի եւ նախնյաց ավանդների, նրանց որդիական հավատարմությունը հայոց հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդեպ:

Հայրապետական իր օրհնությունը բերելով հայորդիներին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատգամեց զորեղ մնալ ազգային գիտակցության մեջ, իրենց սրտերում մշտավառ պահել սուրբ Գրիգոր Լուսավորչի հավատո կանթեղի լույսը եւ նախանձախնդրությունը՝ նախնյաց ժառանգության հանդեպ: Աղոթք բարձրացվեց նաեւ խաղաղության, հայրենիքի հզոր ապագայի եւ մեր ժողովրդի բարօրության ու նորոգ առաջընթացի համար: Հանդիպմանը ներկա էին Իտալիո հայոց հոգեւոր հովիվ եւ Արեւմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակի փոխանորդ Թովմա վրդ. Խաչատրյանը, բարձրաստիճան հյուրեր Վատիկանի Սուրբ Աթոռից, Արեւելյան Ուղղափառ Եկեղեցիների, ինչպես նաեւ Իտալիայում եւ Վատիկանում հավատարմագրված ՀՀ դեսպանատների ներկայացուցիչներ:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու եւ Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու Հովվապետերի հանդիպումը

Հոկտեմբերի 24-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Վատիկանում հանդիպում ունեցավ Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու Սրբազան Քահանայապետ Նորին Սրբություն Ֆրանցիսկոս Պապի հետ:

Նախ տեղի ունեցավ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Հռոմի Սրբազան Քահանայապետի առանձնազրույցը, որից հետո՝ հանդիպումը Վեհափառ Հայրապետի պատվիրակության հետ:

Հանդիպման ընթացքում անդրադարձ կատարվեց երկու Եկեղեցիների միջեւ առկա ջերմ եղբայրական հարաբերություններին ու համագործակցությանը: Արծարծվեցին Մերձավոր Արեւելքում քրիստոնեական համայնքների խնդիրներին, Երուսաղեմում Եկեղեցիների իրավունքներին վերաբերող հարցեր:

Ընդգծվեց մարդկության առջեւ ծառացած ժամանակակից մարտահրավերների հաղթահարման գործում, աշխարհում խաղաղությանն ու համերաշխության հաստատմանն ի խնդիր Քրիստոնեական Եկեղեցիների գործակցության առավել խթանման եւ ջանքերի մեկտեղման անհրաժեշտությունը:

Զրույցի ընթացքում խոսվեց նաեւ Հայաստանում տեղ գտած վերջին քաղաքական զարգացումների, երկրի առջեւ ծառացած մարտահրավերների հաղթահարման ուղղությամբ ձեռնարկվող քայլերի մասին:

Նույն օրը Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպումներ ունեցավ նաեւ Կաթոլիկ Եկեղեցու Արեւելյան Եկեղեցիների ժողովի նախագահ կարդինալ Լեոնարդո Սանդրիի եւ Քրիստոնեական միության քահանայապետական խորհրդի նախագահ Նորին Սրբազնություն կարդինալ Կուրտ Կոխի հետ: Խոսվեց երկու Եկեղեցիների միջեւ կապերի զորացման ուղիների, արեւելյան ուղղափառ - կաթոլիկ երկխոսության շրջանակներում տեղի ունեցող հանդիպումների եւ համատեղ իրականացվելիք ծրագրերի մասին:

հայ Ֆիդայիների առասարան

4 ↩ Դերիկ-Վան ճանապարհը կիսով չափ կրճատում էր կապը երկրի հետ: Դերիկի վանքը գտնվում էր «...Ճեհնէմ եւ Տիւղմէն Տերէ ըսուած ձորերուն իրար միացած տեղը՝ բլրակի մը վրայ» *(Արմ. Եկարեան, էջ 23)*:

Այդ վանքում տարիներ շարունակ պաշտոնավարել էին Հովհաննես Բազունի եւ վասպուրականցիների շրջանում մեծ հեղինակություն վայելող Արսեն Թոխմախյան վարդապետները, որոնք, սակայն, այլեւս չդիմանալով շրջակա քրդական ցեղախմբերի ճնշմանն ու ասպատակություններին՝ թողել ու հեռացել էին: Դրանից հետո վանքն ապաստան էր դարձել մի շարք քրդական կռվասեր եւ ավազակաբարո ցեղերի համար:

Վանքին անմիջապես կից կար քրդական փոքրիկ գյուղ, իսկ մի պարսիկ «բանջարանոց մը պատրաստած էր... վանքը ամբարի մը վերածած էր եւ տիրացած անոր» *(նույն տեղում)*:

Վանի արմենական կենտրոնական մարմինը (Կեդրոն) Դերիկի վերաբերյալ որոշում կայացնելուց հետո մարտիկների մի խումբ է ուղարկում, որը գրավում է վանքը, ուսումնասիրում շրջակայքը եւ ամուր հիմնավորվում: Արմենական փորձառու մարտիկներ Արմենակ Եկարյանի, Մովսեսի (Միքայել Իշխանյան), Ֆահրատի (Գրիգոր Արարքցյան) հետ այստեղ են գալիս մի խումբ դաշնակցականներ, որոնց թվում՝ Սեւքարեցի Սաքոն, Նիկոլ Դումանը, Վարդանը: Այստեղ են գալիս նաեւ անվախ կտրիճներ Չաքոն ու Շերոն: Շրջակա քրդերը մի քանի անգամ փորձում են գրավել ու ավերել Դերիկի վանքը, բայց՝ ապարդյուն: Վանքը հուսալի ապաստան է դառնում զինատար խմբերի համար: Դաշնակցականներն ամրացնում են վանքի պարիսպները եւ կառուցում նոր շինություններ: Իսկ արմենականներին հաջողվում է Թավրիզի առաջնորդ Ստեփանոս եպս Մխիթարյանի միջոցով պաշտոնապես վավերացնել վանքի հանդեպ հայության ունեցած իրավունքները:

Հետզհետե Դերիկ-Վան ուղեգիծը դարձավ «Կյանքի ճանապարհ», քանզի առանց էրգիր զենք ներմուծելու՝ ազգային-ազատագրական շարժման պատասխանատուների համար անկարելի կլինեին որեւէ լուրջ գործողության ձեռնարկումը եւ ժողովրդի անվտանգության ապահովումը: Սակայն Դերիկի սահմանատարածքում կատարվող աշխույժ եռուզեռը շուտով իր վրա գամեց թուրքական կառավարության ուշադրությունը, եւ «...անոր Սալմաստի ու Թաւրիզի հիւպատոսներուն եռանդուն աշխատակցութեամբը, համիտիէ ալայներու ուշադրութիւնն ալ լարուեցեաւ հայերուս եւ մասնաւորաբար տէրիկցիներու վրայ» *(Արմ. Եկարեան, էջ 44)*:

Քրդերի շարունակական հարձակումների եւ ճանապարհներին իշխանությունների կողմից սարքված դավադրությունների պատճառով Դերիկը կորցնում է իր ունեցած նախկին ազդեցությունն ու նշանակությունը: Քրդական խաժամուժի հետ զինատար խմբերի ունեցած ընդհարումների ժամանակ զոհվում են արմենական փորձառու հայդուկներ Կարապետ Տեր-Մովսիսյանը՝ իր երեք ընկերներով, Ալեքի Մովսեսը (Դեւ), որոնց մասին այնքան հուզախառով պատմություններ էին հյուսվել: Արմենականները, Էրգրի հետ կապը պաշտպանելու նպատակով, զինատար կայաններ են հաստատում Հաֆթվանում եւ մերձակա վայրերում, որտեղից Կոտոլի վրայով շարունակում են զենք ներմուծել երկիր:

Թուրք-պարսկական սահմանագլխին գտնվում էին Ախոռիկ եւ Սաթմանց գյուղերը ու Ս. Բարդուղիմեոսի վանքը: Բայց արմենականները խուսափում էին այդ վայրերը հաճախակի օգտագործելուց, քանզի զգուշանում են վտանգելու «այդ վայրերու հայ գիւղացիները» *(Միքայել Նաթանեան, էջ 28)*: Արմենական զինատարները ձգտում էին օգտվել լեռնային, ամայի կամ քրդաբնակ վայրերից ու ճամփուղիներից՝ աշխատելով հարկ եղածին «...մեկուսի անցքերէ ճամբորդել եւ գիշերուան մութէն օգտուիլ քիւրտերուն եւ թիւրք սահմանպահներուն կասկածը զարթեցնելու համար» *(Միք. Նաթանեան, նույն տեղում)*: Զինատար խմբերի կազմակերպման եւ զենքի փոխադրության նպատակով ճանապարհների որեւէ հարմար կետում ստեղծում էին փոքրիկ կայաններ՝ մանրածախ խանութների քողի ներքո՝ զենք փոխադրողներին պատսպարելու հնարավորություն տալու համար: Զինատար շարժման պատասխանատուները նախապես պատրաստել էին եւ իրենց տրամադրության տակ ունեին ճանապարհների ամեն ծակուծուկը լավ սերտած, այդ վայրերի աշխարհագրական դիրքը եւ մանրամասնությունները մանրազնին ճանաչող վալատներ (ուղեցույցներ):

Այսպիսով՝ լեռնային ճանապարհներին, սահմանամերձ տարածքներում գտնվող հայոց վանքերն ու եկեղեցիները հայ ֆիդայիների կողմից օգտագործվում էին ոչ միայն բուն՝ հոգեւոր նշանակությամբ, այլեւ ֆիզիկական առումով՝ իբրեւ թշնամուց պատսպարվելու ապաստարաններ: Այդտեղ նրանք ոչ միայն աղոթում էին, հոգեւոր նոր լիցքեր ստանում, այլեւ հանգստանում ճանապարհների ծանր հոգնությունից, կազդուրվում եւ շարունակում բարդ ու դժվարին երթեւեկը՝ այնքան անհրաժեշտ զենքն ու զինամթերքը հասցնելով Էրգրում մարտնչող այրերին:

Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ (1809-1848)

ԱԲՈՎՅԱՆԸ ՀԱՅ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ. ՆՐԱ ԲԵՐԱԾ ԳՐԱԿԱՆ-ՊԱՏՄԱԿԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սկիզբը՝ թիվ 4-9, 11-12, 15-19

Աղասին եւ վեպի մյուս կերպարները:

Որպես հակադրություն՝ Աբովյանը մահմեդական հոգեւորականների կողքին ստեղծել է մի քստմնելի, վատթարագույն հայ եպիսկոպոսի կերպար, որը ոչ մի կապ չունի Ավարայրի քաջակորով եւ հետագա դարերի լուսամիտ հոգեւորականների հետ եւ իր ճղճիմ ու անմիտ քարոզներով ապակողմնորոշում է ժողովրդին, մաքառումով փրկության փոխարեն մատնացույց անում ստրկության ճանապարհը:

Աղա Պետրոսը, դժգոհելով հայության անտանելի վիճակից, Միառլամի սգի՝ Հասան-Հուսեյինի ողբուկոծի առիթով թուրքերին էջմիածնից ընծաներով մխիթարելու եւ պատվելու եկած բարձրաստիճան հոգեւորականներից դիմում է հիշյալ անանուն եպիսկոպոսին՝ նրանից ակնկալելով փրկության որեւէ հույս կամ խորհուրդ: Սակայն եպիսկոպոսի կրոնամիտ պատասխանը, որ հակառակ է Ավետարանի «Ակն ընդ ակն, ատամն ընդ ատաման» կարգախոսին, հենց Հայաստանի գլխավոր վերքերից մեկն է, որ խելամտորեն մատնացույց է անում Աբովյանը եւ բացատրում իր ասելիքը տողատակի ծանոթության մեջ: Այդ եպիսկոպոսը գունազարդում, երանություն է համարում հայության կրած տառապանքները, մեր ժողովրդին համարում է «Աստծո ընտրյալ» ազգ, որը պարտավոր է համբերել ու դիմանալ երկրային բոլոր նեղություններին ու չարչարանքներին, բոլոր զրկանքներին ու նվաստացումներին: Անգամ այն իրողությունը, որ ռուս զորահրամանատարներ Ցիցիանովն ու Գոդվիչը չեն կարողացել Երեւանի բերդը գրավել, սա էլ է համարել Աստծո փորձություն: Մինչդեռ ողջամիտ հոգեւորականներն ավելի համբերությունը «էշի մարտիրոսություն» են համարել եւ հարկ եղած դեպքում խաչի հետ սուր են վերցրել, ինչպես Ներսես Աշտարակեցի ու Գրիգոր Մանուչարյան եպիսկոպոսները: Առհասարակ վեպում այն միտքն է զարգացվում, որ էջմիածնի շրջակայքից ու կրոնամիտ քարոզներից հեռու ապրած հայերն ավելի քիչ են ենթարկվել նրանց վնասակար ազդեցությանը, եղել են առավել բնական ու բանական, ինչպես արծափեցի Մանուկը, խլղարաքիլիսեցի իշխան պարոն աղա Սարգիսը, մելիք Հոհանջանը, դսեղեցի Մեհրաբյան-Թումանյան Հովակիմը կամ Հովակիմ Յուզբաշին: Վերջինս՝ Հովի. Թումանյանի իրական պապն ու Դաղստանի կռիվների հերոսը, վեպում բնական հայ հերոսի վավերական կերպար է, ում Աբովյանը պատկերել է էպիկական թանձր գույներով. «Մենակ դսեղեցի Մեհրաբյան-Թումանյան Հովակիմի անունը քարերը սասանացնում էին: Սարերի, ձորերի միջում մեծացած՝ գազանի ու հարամումու արինը թափելով էր նրա ոսկորները հաստացել: Երկու տղամարդ նրա մեջքը չէին կարող խտտել. Հինգ մարդ նրա ձեռը չէին կարող ոլորել...» *(նույն տեղում, էջ 115)*:

Շարքային ընթերցողը դժվար կնկատի, որ վեպի սկզբում Աբովյանը խոսել է Աղասու խմբի հինգ քաջակորով ընկերների մասին: Չորս ընկերները՝ երբեմն անունների մասնակի փոփոխմամբ՝ ա. Մուսա, Մուսե, Մոսի կամ Մովսես, բ. Վանո, Վանի կամ Հովհաննես, գ. Վաթո կամ Վարդան եւ դ. Կարո կամ Կարապետ, այս կամ այն չափով մասնակցում են վիպական գործողություններին, երեւում են վեպի զանազան դրվագներում, սակայն Աղասու հինգերորդ ընկերոջ անունը հեղինակը ոչ մի անգամ, ոչ մի դրվագում, որեւէ գործողության մեջ չի հիշել:

Սրանք չնչին վրիպումներ են վեպի գեղարվեստական ընդգրկուն համապատկերում եւ համազգային պատմաճանաչողական վիթխարի նշանակության առջեւ, որոնցով առհասարակ պետք է բնորոշվի Խ. Աբովյանի հանճարեղ վեպը:

Վիպական հյուսվածքում հանդես են բերված տարբեր ազգերի հերոսներ. շարքային քանաքեռցիներից՝ շահամոլ ու որկրամոլ տգետ քահանա տեր Մարկոսը, ահա եւ «մի աչքը շիլ, մորուքը երեսին չորացած» գզիր Կոտանը՝ մի կատարյալ հոմերոսյան Թերսիդես, որը «մի աչքը շիլ, մի ոտը կաղ՝ ման էր գալիս լնգլնգալեն»: Տպավորիչ են նաեւ հուժկու ձայնով երգեցիկ Կրչոնց Վիրաբը, դրամի ազդեցությամբ ապականված քաղաքը եւ քաղաքացիներին ավանդական հյուրասեր հայությունից տարբերակող խնամի Հարությունը:

Գյուղի քեթխուդաների, քաղաքացի աղա Պետրոսի, Աղասու եւ նրա ընկերների հետ միասին գործում են իրական-պատմական այլ անձնավորություններ՝ բարձրաստիճան հոգեւորականներ՝ Ներսես արքեպիսկոպոս Աշտարակեցին, որ հետո դարձավ «Պաշտպան հայրենյաց» պատվանունով միակ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, խաչին հավասար սուր գործածող Գրիգոր եպիսկոպոս Մանուչարյանը, «քրիստոնեի թուրը իրան հավատն ա, քրիստոնեն թրի կոթն էլ ա բռնելու իրավունք չունի» ողորմելի փիլիսոփայության կրող, հնազանդություն քարոզող անանուն եպիսկոպոսը, ռուս զորահրամանատարներ՝ Երեւանի բերդը գրաված գեներալներ Պասկեւիչը, 1806 թ. այդ նույն բերդը պաշարած, բայց չգրաված Ցիցիանովը, Երմոլովը, հայազգի ռուս գեներալ Վալերիան Մադաթովը, ով 1826 թ. Արցախը լիովին ազատագրել էր պարսիկ նվաճողներից (այսօրվա ադրբեջանցիներն Արցախում առհասարակ

չկային), ռուսական բանակի լեհ գեներալ «Վարշավու կոմս» մականունով Կրասովսկին, ով Ներսես արք. Աշտարակեցուն ուղեկցում է պարսիկներից ազատագրված Երեւանի բերդն օրհնելու, «հայերին արած լավություններով» հայտնի Երեւանի սարդար Հուսեյին խանը, նրա եղբայրը՝ «արինակեր» Հասան խանը, Նաղի խանը, քուրդ աշիրաթապետ Օքյուզ աղան, հայերի բարեկամ՝ Երեւանի «բնիկ թուրք» Ասլամազ կուլի Սվանդուլի խանը, իր բարեսիրությամբ հայտնի Սահակ աղան:

Այս կերպարները կերտելիս ակնառու են հեղինակի ռեալիստական հակումները, իսկ գլխավոր հերոսին որպես բացառիկ անհատականություն կերպավորելիս, մանավանդ նրան «մեռելային անշարժության» դատապարտված միջավայրին հակադրելիս, նրա մեջ հայ մարդու լավագույն հատկանիշները՝ քաջությունն ու հերոսականությունը, ազատ ապագայի երազանքները, ծնողասիրությունը, հայրենասիրությունը, քրիստոնյա Ռուսաստանի հովանու ներքո Անի մայրաքաղաքով հայոց պետականությունը վերականգնելու, ազատության ճանապարհին զոհվելու պատրաստակամությունը մարմնավորելիս եւ իդեալականացված կերպար ստեղծելիս, ակնհայտ է ռոմանտիկական պաթոսը:

Շարունակությունը՝ էջ 8

ՀԱՅՐ ԱՆԴՐԵԱՍ ԿՈՆԱՆՈՍ

ԴԱՐՁԻՐ ԱՄԵՆԱԳԵՂԵՑԻԿ ԴԵՄՔԸ

«Անտեսանելի անցումներ» ռադիոհաղորդումներից

Սկիզբը՝ թիվ 18-19

Գիտե՞ս՝ ինչ արա: Գնա, վերցրու մանուկ ժամանակվա լուսանկարներդ ու տես, թե ինչպիսին էիր, տես, թե ինչ հրեշտակային դեմք ունեիր, հրեշտակի նման էիր: Այդպիսին է քեզ ստեղծել Աստված. հրեշտակային արարած՝ անմեղ դեմքով: Նայում էիր մարդկանց աչքերին՝ առանց խղճի խայթի, առանց մեղքի զգացման, առանց ամաչելու ու հայացքդ ամոթից կախելու, չէիր նայում ծուռ հայացքներով, ամբարտավանությամբ ու հպարտությամբ: Այն ժամանակ անմեղություն, մանկականություն ունեիր ներսումդ: Ինչո՞ւ կորչեն այդ ամենը, ինչո՞ւ կորան այդ ամենը: Ինչպե՞ս եղավ այս փոփոխությունը: Ասեմ՝ ինչպես եղավ. աստիճանաբար, կամաց-կամաց: Գեղեցկությունդ կորցրիր կամաց-կամաց, սիրելի՛ ընկեր եւ սիրելի՛ ընկերուհի: Այսպիսին չէիր: Շատ լավն էիր, շատ գեղեցիկ, շատ անմեղ, անչափ սեր ունեիր մեջդ: Հետո մի բան եղավ, մի բան ճաք տվեց, կոտրվեց ու փչացավ, որը նորից կարող է վերականգնվել հիմա: Կարող ես նորից ուղղել ամեն ինչ: Գիտե՞ս՝ ինչ է պետք. արցունքի մի կաթիլ, մի թեթեւ շարժում, որ ասես. «Տեր իմ, ինչպիսի՛ն էի եւ ինչպիսի՛ն դարձա: Ինչո՞ւ ամեն ինչ այսպես փչացավ»:

Քեզ մի պատմություն պատմեմ, որ կարդացել եմ մի գրքում. կարող է՝ դու էլ լսած լինես: Միքելանջելո՝ այս մեծ նկարիչը, երբ ուզում է նկարել «Խորհրդավոր ընթրիք»-ը, ընտրում է իրական մարդկանց՝ որպես բնորդների, որպեսզի նկարը ճշմարտանման լինի: Երկար տարիներ է տեւում այս գործընթացը: Նրա առաջին մտահոգությունը Քրիստոսին նկարելն էր. «Ո՞ւմ գտնեմ, որ Հիսուսին նման լինի»,- մտածում էր նա: Եվ այդպես փնտրում էր մեկին, որ շատ գեղեցիկ լինի: Երկար փնտրտուքից ու տանջանքներից հետո գտնում է մի մարդու՝ բարեկիրթ, խոնարհ, զգայուն, գեղեցիկ դեմքով ու հոգով, եւ ասում նրան. «Խնդրում եմ, օգնիր ինձ, պետք է Քրիստոսի դեմքը նկարեմ ու կարծում եմ՝ դու շատ հարմար ես՝ բնորդ լինելու համար: Իհարկե, չկա այնպիսի մարդ, որ ամբողջովին նման լինի Տիրոջը, բայց դու այնպիսի պայծառ, սուրբ, լուսավոր, անմեղ, մաքուր դեմք ունես, որ շատ ես նմանվում Քրիստոսին: Պարզապես պետք է անշարժ նստես, ու ես նկարեմ»: Մարդն ասում է. «Լավ, նստեմ: Չգիտեմ՝ ինչու իմ մասին այդպիսի կարծիք ունես, բայց կարեւոր չէ, կօգնեմ քեզ»: Նկարում է Միքելանջելոն եւ ոգեւորվում. «Ինչ գեղեցիկ ստացվեց Քրիստոսը, ի՜նչ լավ բնորդ էի ընտրել»: Հետո սկսում է փնտրել բնորդների՝ սուրբ առաքյալներին նկարելու համար. Քրիստոսի կողքին նկարում է սուրբ Հովհաննեսին, սուրբ Պետրոսին եւ հերթով բոլոր առաքյալներին: Անցնում են տարիները, տարբեր թաղամասեր է գնում, տարբեր միջավայրերի մեջ մտնում՝ իր բնորդներին գտնելու համար: Ուզում է այնպիսի դեմքեր գտնել, որոնց հայացքների մեջ երեւան առաքյալներին բնորոշ գծերը. Պետրոս առաքյալին նկարելու համար փնտրում է մի մարդու, որ լինի խանդավառ, եռանդուն, որի դեմքի վրա կայծ երեւա, Թովմա առաքյալի համար փնտրում է մեկին, որի հայացքի մեջ թերահավատություն երեւա եւ այլն: Եվ այդպես անցնում են տարիները, եւ այդ մեծ կտավն ավարտելու համար մնում է նկարել Հուդային: Պետք էր գտնել մի դեմք, որ լիներ տգեղ, չար, ատելությամբ լի, արտահայտեր անհավատություն ու մեղսավորություն: «Ինչպե՞ս հիմա ես այդպիսի դեմք գտնեմ,- մտածում է մեծ նկարիչը,- գոյություն ունի՞ արդյոք այդպիսի դեմք»: Փնտրում է, փնտրում, գնում է վատահամբավ ու թշվառ թաղամասերը, նայում մարդկանց տգեղ, տանջված դեմքերին եւ վերջապես գտնում է մեկին, որը, իր կարծիքով, շատ նման էր Հուդային, ու ասում է նրան. «Քեզ մի հարց տամ. սովա՞ծ ես»: «Սոված եմ»,- ասում է մարդը: Նկարիչն ասում է. «Քեզ շատ փող կտամ, եթե ինձ օգնես: Միակ բանը, որ պետք է անես, անշարժ նստելն է, որ նկարեմ քեզ»: «Լա՛վ»,- համաձայնում է մարդը: Նստում է, եւ Միքելանջելոն սկսում է նկարել Հուդային, որը վերջին դեմքն էր կտավում: Ավարտին էր հասցնում իր երկարամյա գործը: Եվ մինչ նկարում էր, «Հուդան» սկսում է լաց լինել: Միքելանջելոն զարմանում է. «Սպասիր, ի՞նչ է եղել, ինչո՞ւ ես հուզվել: Կարծում ես՝ քեզ լավ չե՞մ նկարել, նմա՞ն չէ քեզ»: «Դրա համար չեմ լալիս»,- ասում է մարդը: «Հապա ի՞նչն է պատճառը, ո՛վ մարդ, սիրելի՛ «Հուդա», ինչո՞ւ ես լաց լինում»: «Հուդան» ասում է նրան. «Ինձ չե՞ս հիշում»: «Որտեղի՞ց հիշեմ,-ասում է նկարիչը,- առաջին անգամ եմ գալիս ձեր թաղամաս»: «Չե՞ս հիշում՝ 10-12 տարի առաջ էլի ինձ դիմեցիր օգնության խնդրանքով: Տեսնո՞ւմ ես սրան»: «Ինչպե՞ս չեմ տեսնում, Քրիստոսն է,- ասում է Միքելանջելոն,- հիասքանչ է, չէ՞: Մի մարդու էի գտել՝ քաղցր ու չքնաղ դեմքով: Հավատա՛, գոյություն ունի այդպիսի դեմք»: «Այլեւս գոյություն չունի,- ասում է մարդը,- դա ես եմ»: Միքելանջելոն քարանում է, շարունակ օրորում է գլուխը, չի կարողանում ուշքի գալ. «Ինչպե՞ս... Դու, որ մի ժամանակ Քրիստոսին էիր նման, ինչպե՞ս ես այսքան նմանվել Հուդային»: Ու նորից «Հուդան» սկսում է լաց լինել: Լաց է լինում, որովհետեւ իր դեմքն այլեւս առաջվանը չէր՝ Քրիստոսի նման: Եվ պատմում է իր կյանքը, թե ինչպես է մտել վատ շրջապատներ, սովորել հայհոյանքներ, վատ սովորություններ ձեռք բերել. գիշերային կյանք, անառակություն, մեղքեր, չարիքներ...

Այս ամենն ազդում են մարդու վրա: Դրա համար եմ քեզ ասում. ուր որ գնում ես, կապվում ես, ուր որ գնում ես, վերցնում ես, քեզ փոխանցվում է այն, ինչ ուրիշն ունի: Լա՞վ մարդկանց հետ ես շփվում. դու էլ լավը կլինես: Շփվում ես այնպիսի մարդկանց հետ, որ ջերմ սի՞րտ ունեն Քրիստոսի հանդեպ. կջերմանա նաեւ քո սիրտը, կգեղեցկանաս նաեւ դու: Շփվում ես այնպիսի մարդկանց հետ, որ սառա՞ծ են Քրիստոսի հանդեպ. դու էլ կսառչես: Օծանելիքի խանո՞ւթ ես մտնում. դուրս կգաս, ու շորերիցդ օծանելիքի հոտ կգա: Մտնում ես մի տեղ, որտեղ ծխում են. ծուխը շորերիդ կկպչի, ու վրայիցդ ծխի հոտ կգա: Մեր ընկերները, շրջապատը, սովորությունները, վայրերը, ուր հաճախում ենք, մեզ գեղեցկացնում կամ տգեղացնում են: ➥ 7

ՉԱՐԵՆՑՆ ԻՐ ՄԱՀՎԱՆ ԿՌԱՀՈՒՄՆԵՐՈՒՄ



Սկիզբը՝ էջ 3

Մի, եթե ոչ փակ, ապա խորհրդավոր առեղծված են «Երեքը (Պոեմ հավիտենական)», «Հետերա-երազ», «Եզերքը ահդ», «Մարի, էգ թռչուն», «Հարդագողի ճամփորդները» բալլադները, որոնց մեջ կա եւ միստիկա, եւ մահվան մերձավոր զգացողություն, եւ պայքարով ազատագրվելու ու կյանք վերադառնալու ճիգ:

Ահդի եզերքն է՝ դժոխքի դուռը, հայոց դիցաբանությամբ Սպանդարամետ - Սանդարամետի Անդունդը, ուր հոշոտում են երազները, իսկ «երազների դիերն անկենդան» նետում Ստիքսը, որով հոգիներ են տեղափոխվում:

«Մարի, էգ թռչուն»-ը երկինք համբարձած այդ ոգու վերադարձի աղերսն է. մահվան աշխարհից դեպի կյանք. «Եվ ինչո՞ւ համար իմ մարմինը լույս // <...> // Դեռ պետք է կրի դիակը հոգուս»: «Աշխարհը զգալու» կյանքի մեծ երազանքը մղում է արդար ինքնազոհաբերման. «Վառվել ու մարել աշխարհի վրա՝ // Զոհի՞ պես արդար, ինքնաամոքիչ...»: Հետո արդեն երկրային կյանքն է («Հարդագողի ճամփորդները»)՝ իր օրհնանքով ու անեծքով: Նորից մահվան աչքերին նայող մի հայացք է, որքան ողբերգական, նույնքան էլ հեգնական: Գորշ, անարեւ կյանքի ու երազանքների բախումն է, որի ողբերգությունից հոգին փշուր-փշուր է լինում. «Մենք կժպտանք, գո՞ի կժպտանք մեռնելիս, // Որ երազում երազեցինք ու անցանք»:

«Ծիածան» ժողովածուն արդեն տանում է դեպի մահվան էսթետիկացում: Նախորդ գործերի հոգեբանական շարունակությունն է՝ ստեղծված 1916-1917 թթ.:

Մահվան էսթետիկա. այստեղ արդեն կյանքի ու մահվան վեդայական շրջապտույտն է, ըստ որի՝ հոգին չի մեռնում, մեռնում է մարմինը, իսկ հոգին վերամարմնավորվում է.

Հոգին չի մեռնում: Մարմինը թողած երկրային փոսում -
Թափառում է նա տիեզերական լաբիրինթոսում:
(I, 68)

Ահա եւ մահվան այդ երանելի թմբիրը.

Մահը, գիտե՞ս, մի լուսավոր առասպել է, քո՛ւյր.
Կյանքը այնքան մեղկ ու անգույն ու անբեր է, քո՛ւյր:

Մահը անուշ, անրջալույս տրտմություն ունի.
Կյանքը սակայն շաչող, փախչող, անհամբեր է, քո՛ւյր:

Կյանքի կանչը անկումների ազդարար է լոկ.
Մահը սակայն Կապույտ Երկրի մի բանբեր է, քո՛ւյր...
(I, 111)

Այս մտայնության արտահայտություն են ժողովածուի շատ բանաստեղծություններ՝ «Լուսամփոփի՞ պես աղջիկ...», «Դիր մատներդ կույս...», «Որքան ցավ կա...», «Մարում է հոգիս...», «Իրիկնային քո՛ւյր իմ հեզ, մեռելի պես դու անցի՛ր», «Շրթունքներիդ հոգեվարքն է...»: Հրաժեշտ, բաժանում, հեռացում ու մահ: Իրար Ամենտի երկրում մահվամբ վերագտնելու հույս:

Իսկ Ամենտը եգիպտական առասպելաբանության մեջ Արեւմուտքի՝ Մեռյալների թագավորության տիրակալն էր՝ կնոջ կերպարանքով, գլխին Ամենտետ (Արեւմուտք) հիերոգլիֆը (մեհենագիր, պատկերագիր): Մեռյալների հովանավորը հանդերձյալ աշխարհում հանգուցյալներին դիմավորում էր ձեռքերը մեկնած...

Որտեղի՞ց մահվան այս վեհացումը: Խորհրդապաշտության փիլիսոփայությունն իր հերթին՝ երկատված այնկողմնային աշխարհի գաղափարաբանությամբ, հիմքում հայոց մեծագույն ողբերգությունն էր՝ եղեռն-ցեղասպանություն, որ համատարած մահվան համանվագ էր հնչեցնում: Չարենցը սրբագործում է մահը հանուն մեկուկես միլիոն նահատակների՝ փորձելով հավերժության մեջ փրկել նրանց հոգիները:

Մ՛յն է, ինչ 2015-ին արեց Հայոց Եկեղեցին՝ նրանց սրբադասելով:

Սա այն է, ինչ Հ. Թումանյանը հնչեցրեց որպես համազգային հոգեհանգիստ՝ «Հանգե՛ք, իմ սրբեր...», Կոմիտասն իր կյանքի հետագա քսան տարին ապրեց ամեն օր մեռնելով, իսկ լուսավոր հանճարների մի փաղանգ ինքը զոհ գնաց նախճիրին՝ Զոհրապ, Վարուժան, Յարճանյան, Սեւակ...

Այո՛, Չարենցը սրբագործում է մահը...

Մահվան այս համանվագը տարբեր հնչյուններով՝ ողբերգականից մինչեւ հեգնական, խաղայինից մինչեւ ճակատագրական, հնչել է նաեւ 1915-1917 թթ. գրած շատ այլ բանաստեղծությունների մեջ՝ «Դահիճը կարմրազգեստ», «Գիտեմ, որ մի օր կմեռնեմ ես էլ»...

Մահվան դեմքն ու դիմակը Չարենցի աչքի առջեւ էին:

Ինչպես նա, այնպես էլ ամբողջ հայ մտավորականությունն առաջին պահին ոգեւորությամբ ընդունեցին 1917 թ. փետրվարյան հեղափոխության լուրը: Ի վերջո, ազատագրվում էին ինքնակալության լծից, Թիֆլիսում նստող փոխարքայի կամայականություններից: Փետրվարյան հեղափոխությանը հաջորդեց հոկտեմբերյան հեղաշրջումը, որը, ռուսական զորքերի նահանջով, հայ ժողովրդի համար դարձավ 1884-1886-ից սկսած, 1909-ին բռնկված, 1915-ին մոլեգնած ազգային ողբերգության հերթական արարը:

Չարենցն ընդունեց հեղափոխությունը՝ հայ ժողովրդի փրկության աղոտ հույսը կապելով դրա հետ:

Մահվան միստիկան դարձավ խնդության երգ: Կապույտ աշխարհի մեռնող աղջիկը դարձավ կարմիր ամազոնուհի, լուսամփոփի պես թոքախտավոր աղջիկը՝ բրոնզե արեւավառ հարս: Անցման նախանշանը «Ողջակիզվող կրակ» շարքն է՝ «Իրիկուն», «Վերադարձ», «Առավոտ» ենթաբաժիններով:

Մահվան աշխարհից դեպի փրկության ափ հույսի շողն ամբողջ շարքն է, իսկ բուն ասելիքի շունչը սա է.

Ինչպես երկիրս անսփոփ, ինչպես երկիրս բախտազուրկ,
Ինչպես երկիրս ավերակ ու արնաներկ -
Մխում է սիրտս հիմա որբ, մխում է սիրտս բախտազուրկ,
Մխում է սիրտս՝ ավերակ ու արնաներկ...

Եվ այս երգերը իմ կարմիր, ախ այս երգերը իմ կարմիր,
Որ երգում է անսփոփ սիրտս կրակում -
Ինչպե՞ս պիտի արդյոք հնչեն, ախ, այս երգերը իմ կարմիր -
Իմ ավերակ, իմ ո՛րբ երկրում...

Ինչպես երկիրս անսփոփ, ինչպես երկիրս ավերակ -
Այնպես էլ սիրտս - անսփոփ, այնպես էլ սիրտս - անուրախ,
Վերք է դառնում սրտիս խորքում օրերի փայլը այս հրակ -
Ախ, սի՛րտ իմ, բո՛րբ ու անսփոփ - երկի՛ր իմ՝ ո՛րբ ու անուրախ:
(I, 167)

Ընդհանուր խանդավառության մեջ, որ արտահայտվեցին 1917-1920 թթ. գրած պոեմներում («Սոմա», «Ամբոխները խելագարված», «Նայիրի երկրից», «Դեպի ապագան», «Բրոնզե թեւերը կարմիր գալիքի»), շարքերում («Ողջակիզվող կրակ», «Տաղարան», «Ութնյակներ արեւին») եւ շարքերից դուրս բանաստեղծություններում, առանձնանում է «Մահվան տեսիլ»-ը (1920): Զոհի, ողջակեզի կերպարը, որ արդեն նրա խառնվածքի մեջ կար, այստեղ իր լարվածությամբ հասնում է գագաթնակետին:

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր



ԴԱՐՁԻՐ ԱՄԵՆԱԳԵՂԵՑԻԿ ԴԵՄՔԸ

«Անտեսանելի անցումներ» ռադիոհաղորդումներից

6 ↩ Ոչ ոք չի կորցրել իր անմեղությունը հենց այնպես, առանց պատճառի: Մի բան լսել ենք, տեսել, խառնվել ենք ինչ-որ գործերի մեջ ու փչացել: Այս բանն ապրել եմ առաջինը իմ մեջ, դժբախտաբար, եւ ապա՝ այլ մարդկանց մեջ, ում երկար տարիներ չտեսնելուց հետո հանկարծակիի եմ եկել, այնքան փոխված ու անճանաչելի են դարձած եղել:

Արդ՝ Քրիստոսից հեռու լինելով՝ նաեւ արտաքնապես ես փոխվում: Սա տեսություն չէ: Փոխվում է տեսքդ, դեմքդ չարանում, մթնում: Ի՞նչ բան է սա: Մինչդեռ մեջդ մի սուրբ ես թաքցրած պահում: Դու էլ կարող էիր լինել այն դեմքը, այն բնորդը, ում նկարեց Միքելանջելոն որպես Քրիստոս «Խորհրդավոր ընթրիք»-ում: Դո՛ւ, այո՛, դու: «Բայց ես պզուկներ ունեմ»: Կարեւոր չեն պզուկները: Հասկացի՛ր վերջապես, որ տգեղ չես այն պատճառով, որ ականջներդ դուրս են ցցված, որ քիթդ մեծ է կամ փոքր, որ աչքերդ այլ ձեւ ունեն, որ մազերդ խիտ են կամ նոսր, կամ ընդհանրապես մազ չունես... Մարդիկ այսօր անում են ամեն ինչ, որպեսզի գեղեցիկ երեւան, բայց դեռ չեն հասկացել՝ ինչ է իսկապես գեղեցկությունը: Փնտրում ենք գեղեցկությունն այլուր, ոչ Քրիստոսի մեջ: Այնինչ Քրիստոսն է գեղեցկացնում մեզ, Քրիստոսն է գեղեցկացնում զույգերին, գեղեցկացնում քեզ, որ դուր գաս կնոջդ: Դի՛ր Հիսուսին կյանքիդ մեջ, խոնարհ եղիր, ուղղվիր, աղոթիր, խոստովանիր, հաղորդվիր: Եվ մի բան ասեմ քեզ. մի՛ հաղորդվիր անընդհատ, ամեն անգամ, եթե երկմտում ես: Չեմ խոսում քո մասին, որ չես երկմտում: Հաղորդվիր մեկ անգամ ու գնա, նայիր հայելու մեջ եւ կտեսնես, որ փայլում ես:

Մի անգամ մի մարդ հաղորդություն էր վերցրել, եւ ես չգիտեի այդ մասին, բայց երբ տեսա նրան, այնպիսի խաղաղություն կար դեմքի վրա, աչքերի մեջ այնքան քաղցրություն, ջերմություն, որ ասացի նրան. «Մի բան հարցնեմ. հաղորդվե՞լ ես»: «Ինչպե՞ս իմացար»,- հարցրեց: «Էհ, երեւում է»,- ասացի նրան: Այո՛, երեւում է, Աստծու շնորհն է, որ գեղեցկացնում է մեզ: Բայց զգույշ եղիր, որ չկորցնես այդ գեղեցկությունը: Սուրբ Սիլուանոսն ասում է. «Բավական է՝ մեկի մասին մի վատ բան մտածես, Աստծու շնորհն անմիջապես հեռանում է քեզնից»: Կորչում է դեմքիդ քաղցրությունը, չարանում ես նորից, նորից մռայլվում ու մթնում:

Ահա այս ամենի մասին սկսեցի մտածել, երբ մետրոյում հանդիպեցի անհանգիստ հայացքներով, գզգզված մազերով երիտասարդությանը: Եվ երբ նրանցից հեռացրի ամեն ինչ, որ ավելորդ էր, ուղղեցի նրանց մազերը, սանրեցի, խաղաղեցրի նրանց, խոնարհեցրի, ասում եմ քեզ, այնքա՛ն գեղեցիկ դեմքեր երեւացին տակից: Շրջում ենք մարդկանց մեջ, որոնք բոլորն էլ կարող են սրբեր դառնալ, շրջում ենք մարդկանց մեջ, որոնք բոլորն իրենց մեջ մի այնպիսի՛ գեղեցկություն ունեն թաքցրած, որ կորել է տիղմի մեջ: Եվ գաղտնիքը, ինչպես ուսուցանում է մեզ Եկեղեցին՝ քեզ, ինձ, ամուսնուդ, կնոջդ, երեխայիդ, հետեւյալն է. սովորի՛ր անցնել քո եւ ընկերոջդ տիղմի վրայով, մի՛ մնա ցեխի մեջ, առաջ գնա դեպի ադամանդը, մի՛ մնա կեղտի մեջ, առաջացիր դեպի անուշահոտություն, մի՛ մնա արտաքնապես երեւացող տգեղության մեջ, առաջացիր դեպի գեղեցկությունը, որ չի երեւում:

Գեղեցկության որսորդ դարձիր, բացահայտիր գեղեցկությունը, որ կա քո մեջ, կնոջդ մեջ, երեխայիդ մեջ: Եվ այդ ժամանակ կհասկանաս, որ ունես աշխարհի ամենագեղեցիկ կինը, ունես աշխարհի ամենագեղեցիկ ամուսինը, ամենագեղեցիկ երեխաները: Իսկ դու, սիրելի՛ ընկեր, որ ավելի փոքր ես տարիքով, ունես աշխարհի ամենագեղեցիկ ծնողները: Սա ասում եմ, որովհետեւ երբեմն, օրինակ, նայում ես ուրիշների ծնողներին ու ասում. «Տես, նրա մայրն ինչ հարդարված է, գեղեցիկ, իմ խեղճ մայրը... մազերը՝ հասարակ սանրված, չի փայլում այն մյուսի պես»: Եվ սակայն քո մայրիկն աշխարհի ամենագեղեցիկ մայրիկն է, որովհետեւ պարզ է, խոնարհ, որովհետեւ քրիստոնյա է, որովհետեւ աղոթում է:

Կարող է մեկն ասել. «Դու, քահանա լինելով, գեղեցկությունի՞ց ես խոսում»: Այո՛, բայց չեմ խոսում աշխարհիկ գեղեցկության մասին, այլ աստվածային, որը, երբ ունենաս, անհնար է, որ չփոխանցվի ուրիշներին, որ չարտացոլվի շրջապատիդ վրա, անհնար է թաքցնել այն: Ուզում եմ, որ այս գեղեցկությունը գտնես, որը չի կորչում երբեք, նույնիսկ երբ ծերանում ես: Ուզո՞ւմ ես հավերժ գեղեցիկ լինել. սովորիր սիրել Տիրոջը, սովորիր խոսել Նրա հետ, Ով հավիտյան գեղեցիկ է: Սովորիր սիրել Նրան, ում տեսնելով՝ մարդիկ այլեւս չէին ուզում հայացքը կտրել Նրանից, պատկառում էին Նրանից, պաշտում, երկրպագում ու սիրում:

Ահա այսպես ենք մենք հասկանում գեղեցկությունը Եկեղեցում եւ մեծ աշխատանք ունենք անելու, որովհետեւ մեր շուրջը գտնվում են շատ գեղեցիկ «տգեղ» մարդիկ: Դու, որ լսում ես այս, փորձիր գտնել այն գեղեցկությունը, որ թաքնված է մարդկանց մեջ, երբեք ոչ ոքի մի՛ վիրավորիր, երբեք ոչ ոքի մի՛ նմանակիր ծաղրանքով՝ նրա արտաքինի համար եւ այդքան արագորեն կարծիք մի՛ կազմիր նրա բնավորության ու անհատականության մասին: Սովորիր տեսնել քո կողքինի, ընկերոջ, հարեւանի մեջ թաքնված գեղեցիկը: Աստված չի ստեղծում տգեղ մարդիկ, ինչ որ ստեղծում է Աստված, գեղեցիկ է ու բարի:

Ցանկանում եմ, սիրելի՛ ընկերներ, որ բացահայտեք ձեր ու ձեզ շրջապատող մարդկանց մեջ թաքնված գեղեցիկը, ուրախանաք այդ գեղեցկությամբ ու հաճույք ստանաք: Ցանկանում եմ, որ ձեր դեմքերը խաղաղ լինեն, բնական, պարզ, խոնարհ, թեկուզ եւ քրտնած լինեն խոհանոցի, գործարանի, գրասենյակի աշխատանքի հոգնությունից: Եվ հիմա դու, որ խոհանոցում ճաշ ես պատրաստում կամ լվացք անում կամ մաքրություն ու միաժամանակ լսում ես այս հաղորդումը, մտովի պատկերացնում եմ, ինչքան գեղեցիկ դեմք ունես, որ կարիք չունի ուղղումներ անելու գնացքում հանդիպածս երիտասարդների դեմքերի նման, որովհետեւ Քրիստոսի խոնարհությունն ու զոհողությունն ունես մեջդ:

Եղբայրնե՛ր ու քույրե՛ր, ուրախացեք մեր եկեղեցու գեղեցկությամբ, ձեր հոգիների ու աստվածային կյանքի գեղեցկությամբ եւ մի՛ մոռացեք այն խոսքը, որ ասել է Դոստոեւսկին. «Գեղեցկությունը կփրկի աշխարհը»: Երանի այս գեղեցկությունը ծաղկի մեր սրտերում, իր բույրը տարածի շուրջը եւ փրկի այն ամենը, ինչ որ կարող է դեռ փրկվել այն իրավիճակում, որին հասել ենք այսօր:

Թարգմանությունը հունարենից՝
Տաթեւիկ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ (1809-1848)

ԱԲՈՎՅԱՆԸ ՀԱՅ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ. ՆՐԱ ԲԵՐԱԾ ԳՐԱԿԱՆ-ՊԱՏՄԱԿԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սկիզբը՝ էջ 6

Ինքնակերպավորված հեղինակը եւ քնարական շեղումները վեպում: Թե՛ հեղինակ-պատմողի խոսքում, թե՛ հերոս եւ միջավայր, բնություն եւ մարդկային հարաբերություններ ու իրադարձություններ պատկերելիս եւ թե՛ նրանց նկատմամբ վերաբերմունք արտահայտելիս ուրվագծվել է հեղինակի ինքնակերպարը, որը հատուկ կարեւորություն ունի վեպի կերպարային համակարգում: Սա վեպի գեղարվեստական էական յուրահատկություններից մեկն է: Հեղինակն է իր հազվագյուտ անկեղծ պատումով ներկայացնում վիպական ողջ նյութը, իր լուսավորական ու հայրենասիրական գաղափարները եւ դրանք ենթարկում իր հուզական ընկալման հեղեղին ու գեղագիտական համակարգին:

Հեղինակի կերպարն առավել ցայտունանում է հատկապես այն դրվագներում, որոնք աբովյանագետներն անվանում են քնարական շեղումներ: Դրանցում հեղինակը խորհրդածում կամ անմիջական վերաբերմունք է արտահայտում անցյալի այս կամ այն դրվագի վերհուշի, Հայաստանի բնության՝ ձմռան ցրտի կամ ամռան շոգի, պատկերվող գործողության եւ այս կամ այն հերոսի նկատմամբ: Վեպում ամեն ինչ ենթարկվում է հեղինակի հուզական հարուստ աշխարհի տրամաբանությանը, հստակորեն տարբերակվում են ընդունելին ու մերժելին: Իրականում Աբովյանը համարձակորեն ստանձնել է համայն հայության ուսուցչի դերը: «Որ բարին է եւ քաղցր, ընդէ՞ր ոչ համարել հավանական եւ հաճելի»,- գրել է նա: Հայրենիքն ու մայրենի լեզուն արժեւորող ու նրանցով մարդու կյանքն իմաստավորող պատգամախոսությունը, նրա պատմությունն ու մշակույթը ներկայացնող էջերը, որոնք պատկառելի թիվ են կազմում վեպում, նրա էպիկական հյուսվածքին հաղորդում են նաեւ քնարական բովանդակություն, որի շնորհիվ ստացվել է էպիկականի ու քնարականի մի յուրատեսակ համադրություն: Ընդ որում՝ հեղինակի կերպարը վիպական հյուսվածքում երբեմն այնքան է ցայտուն, որ կարող է բնական հարց առաջանալ. այսուամենայնիվ՝ ո՞վ է վեպի գլխավոր հերոսը, Աղասի՞ն, թե՞ հեղինակն ինքը:

Նկատվում է, որ էպիկական եւ քնարական տարրերի այս համադրությունը, որ գերազանցապես բնորոշ է չափածո ժանրերին եւ հատկապես բալլադին ու քնարաէպիկական պոեմին, արձակ ժանրերից կարող է դրսեւորվել նորավեպում եւ քնարական արձակի այլ տեսակներում, ուր դեպքերը ներկայացվում են հեղինակի անունից: Թող զարմանալի չթվա, եթե «Վերք Հայաստանի» վեպի ժանրը բնորոշելիս նույնիսկ այն անվանվի քնարաէպիկական վեպ: Առանց այն էլ, հենց քնարականությունը նկատի ունենալով, «Վերքը» «Նարեկի» հետ միասին համարել են հայ գրականության երկու մեծ պոեմներից մեկը (Ստ. Զորյան):

Ամեն առիթով Խ. Աբովյանը մատնում է իր ներկայությունը, պատկերվող ամեն ինչ չափակշռում իր անձնական վերաբերմունքով, գնահատում իր եսի պրիզմայով եւ այդպես է համատեղում միմյանց չհակասող կենսական ու գեղարվեստական ճշմարտությունները: Դժվար չէ նկատել, որ հեղինակային պատումն ու գլխավոր հերոսի խոսքը դառնում են միմյանց շարունակություն: Այդպես է, օրինակ, Խլղարաքիլիսայի (հիշեցնենք՝ Գյումրի քաղաքին մոտ գտնվող ներկայիս Ազատան բնակավայրի - Ս. Մ.) ճակատամարտի դրվագը, ուր հեղինակային պատումով ներկայացվող՝ «երկնքի մեջտեղը չի հասած, սար ու ձոր խորովելու «պատրաստ բորբ արեգակի եւ նրա առաջը կտրող «մթնած բորյազի, սեւակոլոլ ամպի» բնապատկեր-հակադրությանը հաջորդում է Աղասու եւ Հասան խանի մենամարտի դրվագը: Իհարկե, մենամարտողն Աղասին է, սակայն թվում է՝ Աղասու փոխարեն հեղինակն ինքն է մենամարտում՝ չոքեցնելով «ավելի շատ իր ձիու, քան իր քաջության հունարովը գլուխը պրծացրած» արյունարբու Հասան խանին ու նրա երեսին ասելով հայի մեծահոգության ու պարսիկների դաժանության մասին ողջ ճշմարտությունը:

Վիպական ողջ տարածքով մեկ ծավալվում է հեղինակի անկեղծ ու մտերմիկ զրույցն ընթերցողի հետ, իսկ այդ զրույցը դառնում է հայոց պատմության, ներկայի սոցիալ-քաղաքական խնդիրների, հայության քաղաքական կողմնորոշման եւ առհասարակ պատմական ճակատագրի եւ ապագայի շուրջ: Անկեղծանալով ընթերցողի առաջ՝ նա գրել է. «Թե դու էլ սիրտ ունիս, չես ասիլ, թե շինովի ա էս պատմությունը»: Առհասարակ վեպը ծփում է հայրենիքի ու հայության հանդեպ անափ սիրով, որը դրսեւորվում է ինչպես հեղինակային պատումում, չափածո հատվածներում, այնպես էլ նրա կերպավորած հերոսի խոսքում ու գործողություններում:

Անշրջանցելի է հատկապես հայության քաղաքական կողմնորոշման խնդիրը, որ երբեմն էլ ստացել է ծայրահեղ, անգամ կամայական մեկնաբանություններ: Ճի՞շտ էր արդյոք հայերի ռուսական կողմնորոշումը, թե՞ ռուս-պարսկական պատերազմի հետեւանքով օտար մի տերությունը պարզապես փոխարինվեց մեկ ուրիշով: Ցավոտ այս խնդիրը պետք է դիտարկել պատմական համատեքստում: Իսկ թե ի՞նչ էր «մեր աշխարհի էն ժամանակվա հալը» պարսկա-թուրքական բռնատիրությունների լծի տակ, վերն արդեն տեսանք:

17-19-րդ դդ. դժոխային այս իրավիճակից, մահմեդական կողոպտիչներից փրկության եւ ազատության ելք որոնելը հայ մարդու բնական իրավունքն էր: Նախորդ դարերում դրան էին միտված Իսրայել Օրու եւ Շահամիրյանների գործունեությունը, ազատագրական ու լուսավորական շարժումներն ու Արցախ-Սյունիքում բռնկված ապստամբությունները: Մահմեդական թշնամի ո՞ր երկրին կարող էին ապավինել քրիստոնյա հայերը, ումի՞ց օգնություն, բարյացակամ վերաբերմունք ակնկալեին, եթե ոչ քրիստոնյա Ռուսաստանից, որի հետ 18-րդ դարասկզբից ի վեր քաղաքական հարաբերություններ էին հաստատել եւ նրա տիրակալներից աջակցության հուսադրող խոստումներ ստացել:

Շարունակելի

Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Գիտաժողով՝ «Հայոց Եկեղեցին ԺԶ-Ի դարերում. առաքելություն, մաքառում, նահատակություն, հաղթանակ» խորագրով

Հոկտեմբերի 25-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանում, օրհնությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի արխիվի ջանքերով եւ համագործակցությամբ «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի, տեղի ունեցավ «Հայոց Եկեղեցին ԺԶ-Ի դարերում. առաքելություն, մաքառում, նահատակություն, հաղթանակ» խորագրով մեկօրյա գիտաժողով՝ կազմակերպված Ամենայն Հայոց Կաթողիկոս Խորեն Ա Մուրադբեկյանի նահատակության 80-րդ տարելիցի կապակցությամբ:

Սկզբում գիտաժողովի մասնակիցները ծաղկեպսակ դրեցին Մայր Աթոռի նահատակաց հուշապատի առջեւ՝ ի հարգանս ստալինյան բռնապետության տարիներին զոհ դարձած հոգեւորականների, այնուհետեւ մասնակցեցին Հայ Եկեղեցու 16-20-րդ դարերի գործունեությանը նվիրված ցուցահանդեսի բացմանը:

Գիտաժողովն սկսվեց Տերունական աղոթքով եւ Մայր Աթոռի արխիվի տնօրեն Ասողիկ քհն. Կարապետյանի բացման խոսքով: Այնուհետեւ մասնակիցներին ողջունեցին Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը, «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի «Քաղաքական երկխոսություն՝ Հարավային Կովկաս» տարածաշրջանային ծրագրի ղեկավար դոկտոր Թոմաս Շրափելը եւ Հայաստանի ազգային արխիվի տնօրեն Ամատունի Վիրաբյանը:

Հայոց Եկեղեցու 16-20-րդ դարերի գործունեությանը նվիրված բանախոսություններով հանդես եկան Արեւելյան Եվրոպայի Հումբոլդտի համալսարանի պատմության դոկտոր, պրոֆեսոր Յորգ Բաբորովսկին («Բռնությունը եւ ահաբեկչությունը ստալինյան ժամանակաշրջանում»), պ. գ. դ. Ստեփան Ստեփանյանցը («Խորհրդային ժամանակաշրջանում Հայ Եկեղեցու սպասավորների հանդեպ կիրառվող բռնությունների եւ Հայ Եկեղեցու ունեցվածքի առգրավման հարցերի մասին (1917-1954 թթ.)»), Հայաստանի ազգային արխիվի գիտահետազոտական բաժնի վարիչ՝ պ. գ. թ. Գոհար Ավագյանը («Ցարիզմի քաղաքականությունը Հայ Եկեղեցու նկատմամբ»), մաշտոցյան Մատենադարանի ավագ գիտաշխատող՝ պ. գ. դ. Քրիստինե Կոստիկյանը («Մայր Աթոռ Ս. Էջմիածինը իրանական տիրապետության շրջանում») եւ Մայր Աթոռի «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանի տնօրեն Արարատ քհն. Պողոսյանը («16-17-րդ դարերում տեղի ունեցած թուրք-իրանական պատերազմների ավերիչ հետեւանքները հայ ժողովրդի համար»):

Զեկուցումներից հետո տեղի ունեցավ քննարկում:

Գիտաժողովի ավարտին Միածնաէջ Մայր տաճարի շրջափակում ամփոփված Խորեն Ա Մուրադբեկյան Կաթողիկոսի շիրմաքարի մոտ կատարվեց աղոթք՝ Հայրապետի հոգու հանգստության համար:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբոլցյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ 517197
Էլ.փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com
web կայք՝
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 31.10.2018 թ.
Տպաքանակը՝ 1175